

**ԴԱՍԸՆԹԱՑ 3**

**ԻՐԱՎԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՀԻՄՈՒՆՔՆԵՐ**

**Քննության հարցեր**

**Հունվար 2022թ**

**Պատասխաններ**  
**Բազմակի ընտրության հարցեր**

*Բազմակի ընտրության 25 հարց, յուրաքանչյուր հարցի ճիշտ պատասխանը գնահատվում է 2 միավոր:*

1	գ
2	դ
3	դ
4	գ
5	գ
6	ա
7	բ
8	ա
9	բ
10	բ
11	ա
12	բ
13	ա
14	ա
15	գ
16	ա
17	ա
18	ա
19	ա
20	բ
21	ա
22	բ
23	ա
24	ա
25	գ



**1. Քաղաքացիական օրենսդրության սկզբունք է՝**

գ/ մասնավոր գործերին որևէ մեկի կամայական միջամտության անթույլատրելիությունը.

**2. Իրավաբանական անձի լուծարման դեպքում երկրորդ հերթին բավարարվում են՝**

դ/ այն քաղաքացիների պահանջները, որոնց առջև լուծարվող իրավաբանական անձը պատասխանատվություն է կրում նրանց կյանքին կամ առողջությանը վնաս պատճառելու համար՝ համապատասխան պարբերական վճարումների կապիտալացման միջոցով.

**3. Ստորև թվարկվածներից ո՞րը (որոնք) քաղաքացիական իրավունքի օբյեկտ չէ (չեն).**

դ/ դեպքերն ու իրադարձությունները.

**4. Կեղծ է համարվում՝**

գ/ այն գործարքը, որը կնքվել է առերևույթ, առանց համապատասխան իրավական հետևանքներ առաջացնելու մտադրության.

**5. Անշարժ գույքի նկատմամբ ձեռքբերման վաղեմություն ուժով սեփականության իրավունքը հնարավոր է ձեռք բերել**

գ/ քաղաքացին կամ իրավաբանական անձը, որն անշարժ գույքի սեփականատեր չէ, այն տիրապետում է տասը տարվա ընթացքում բարեխղճորեն, բացահայտ և անընդմեջ՝ որպես սեփական գույք.

**6. Գրավի իրավունքը դադարում է՝**

ա/ գրավ դրված գույքը օրենքով սահմանված կարգով իրացվելու դեպքում, եթե այլ բան նախատեսված չէ օրենքով.

**7. Հայցային վաղեմությունը չի տարածվում՝**

բ/ ավանդները վերադարձնելու վերաբերյալ ավանդատուների կողմից բանկին ներկայացվող պահանջների վրա.

**8. Լիազորագրի գործողությունը դադարում է, եթե՝**

ա/ մահացել է կամ անգործունակ, սահմանափակ գործունակ կամ անհայտ բացակայող է ճանաչվել այն անձը, ով տվել է լիազորագիրը.

**9. Սպրանքի որակին առաջադրվող պահանջների էական խախտումների դեպքում (չվերացվող թերությունների, ինչպես նաև այնպիսի թերությունների, որոնք չեն կարող վերացվել առանց անհամաչափ ծախսերի կամ ժամանակի կորստի, կամ այնպիսիք, որոնք բազմիցս կամ կրկին ի հայտ են գալիս դրանք վերացնելուց հետո, և նման բնույթի այլ թերություններ) գնորդն իրավունք ունի, իր ընտրությամբ՝**

բ/ հրաժարվել առուվաճառքի պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ապրանքի համար վճարված գումարը.

**10. Լիզինգատուի պահանջով լիզինգի պայմանագիրը կարող է միակողմանի լուծվել, եթե՝**

բ/ լիզինգատուն չի իրականացրել լիզինգի առարկայի հիմնական վերանորոգումը, եթե, համաձայն օրենքի կամ պայմանագրի, դա նրա պարտականությունն է.

**11. Նշված պնդումներից ո՞րն է ճիշտ.**

ա/ կատարված աշխատանքի արդյունքի պատահական կորստի կամ վնասվածքի ռիսկը՝ մինչև պատվիրատուի կողմից այն ընդունելը, կրում է կապալառուն, սակայն եթե պատվիրատուն համարվում է կետանցող, ապա այդ ռիսկն անցնում է պատվիրատուին.

**12. Եթե փոխառուն սահմանված ժամկետում չի վերադարձնում փոխառության գումարը, ապա**

բ/ փոխառության պայմանագրով նախատեսված տոկոսները դադարում են, իսկ այդ գումարին ենթակա են վճարման միայն ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 411 հոդվածի 1-ին կետով նախատեսված չափով տոկոսներ, սկսած այն օրվանից, երբ գումարը պետք է վերադարձվեր մինչև գումարը փոխառուին վերադարձնելու օրը.

**13. Եթե փակ բաժնետիրական ընկերության կանոնադրությամբ նախատեսված ժամկետում բաժնետերերից ոչ մեկը չի օգտվում նախապատվության իր իրավունքից, ապա**

ա/ Ընկերությունն իրավունք ունի այդ բաժնետոմսերը ձեռք բերել սեփականատիրոջ հետ համաձայնեցված գնով.

**14. Բանկային ավանդի պայմանագրի գրավոր ձևը համարվում է պահպանված, եթե**  
ա/ կնքվել է գրավոր պայմանագիր, և բանկային ավանդ մուծելը հավաստված է բանկային կամ դեպոզիտային սերտիֆիկատով.

**15. Ստորև նշված պնդումներից ո՞րն է սխալ ֆրանչայզինգի պայմանագրի վերաբերյալ**  
գ/ Համալիր ենթաթույլտվության պայմանագիրը կարող է կնքվել ավելի երկար ժամկետով, քան համալիր թույլտվության այն պայմանագիրը, որի հիման վրա այն կնքվել է.

**16. Իրավաբանական անձինք և քաղաքացիները, որոնց գործունեությունը կապված է շրջապատի համար առավել վտանգի աղբյուրի հետ (տրանսպորտային միջոցների, մեխանիզմների, բարձր լարվածության էներգիայի, ատոմային էներգիայի, պայթուցիկ նյութերի, ուժեղ ներգործող թույների և այլնի օգտագործում, շինարարական և դրա հետ կապված այլ գործունեության իրականացում), պարտավոր են հատուցել առավել վտանգի աղբյուրով պատճառված վնասը, եթե**

ա/ չեն ապացուցում, որ վնասը ծագել է անհաղթահարելի ուժի կամ տուժողի դիտավորության հետևանքով.

**17. Որպես անհիմն հարստացում ենթակա չեն վերադարձման՝**  
ա/ վաղեմության ժամկետի ավարտից հետո ի կատարումն պարտավորության տրված գույքը.

**18. Գործատուն իրավունք ունի աշխատողի հետ լուծելու անորոշ ժամկետով կնքված աշխատանքային պայմանագիրը, ինչպես նաև որոշակի ժամկետով կնքված աշխատանքային պայմանագիրը նախքան դրա գործողության ժամկետի լրանալը՝**

ա/ աշխատողին նախկին աշխատանքում վերականգնելու դեպքում.

**19. Աշխատանքային օրենսդրության հիմնական սկզբունքներից է՝**

ա/ կոլեկտիվ բանակցությունների ազատությունը.

**20. Հնգօրյա աշխատանքային շաբաթվա դեպքում միջին օրական աշխատավարձի չափը որոշվում է միջին ամսական աշխատավարձը բաժանելով՝**

բ/ 21-ի.

**21. Վարչական մարմինը պարտավոր է կասեցնել վարչական վարույթը, եթե՝**

ա/ վարույթին չի ներկայացել վարչական ակտի հասցեատերը, իսկ օրենքը բացառում է առանց նրա ներկայության համապատասխան վարչական ակտ ընդունելը.

**22. Վարչական ակտի փոփոխման կամ բեկանման հիմքերն են՝**

բ/ վարչական վարույթը դրա իրավունքը չունեցող պաշտոնատար անձի կողմից իրականացված լինելը, նաև այն դեպքում, եթե դա իրականացրել է կոլեգիալ մարմինը, որի կազմում եղել է վարույթին մասնակցելու իրավունք չունեցող պաշտոնատար անձը.

**23. Պարտապանը՝ դատարանի վճռով կարող է սնանկ ճանաչվել՝**

ա/ հարկադրված սնանկության դիմումի հիման վրա՝ եթե թույլ է տվել օրենքով սահմանված նվազագույն աշխատավարձի երկուհազարապատիկը գերազանցող

անվիճելի վճարային պարտավորությունների 90-օրյա կամ ավելի ժամկետով կետանց, և վճռի կայացման պահին նշված կետանցը շարունակվում է.

24. Մահմանափակ պատասխանատվությամբ ընկերության մասնակիցը, որն ընկերության կանոնադրական կապիտալում իր ավանդն ամբողջությամբ չի ներդրել, ա/ համապարտ պատասխանատվություն է կրում ընկերության պարտավորությունների համար՝ իր ավանդի չվճարված մասի արժեքի սահմաններում.

25. Պարտատերերն իրենց պահանջները ներկայացնում են դատարան սնանկության մասին հայտարարությունից հետո՝ գ/ մեկամսյա ժամկետում.

## Պատասխաններ

### Խնդիր 1.

#### Հարց 1. /9 միավոր/

«Սիքուել» և «Ռեմեդի» ՍՊԸ-ների միջև ծագել են փոխառության հարաբերություններ:

Մասնավորապես, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 877-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝

Փոխառության պայմանագրով մեկ կողմը (փոխատուն) մյուս կողմի (փոխառուի) սեփականությանն է հանձնում դրամ կամ տեսակային հատկանիշով որոշվող այլ գույք, իսկ փոխառուն պարտավորվում է փոխատուին վերադարձնել միևնույն գումարի դրամ (փոխառության գումարը) կամ փոխատուից ստացված գույքին հավասար քանակի և նույն տեսակի ու որակի գույք:

Փոխառության պայմանագիրը կնքված է համարվում դրամ կամ այլ գույք հանձնելու պահից:

Սույն դեպքում, չնայած փոխառության պայմանագրում որպես փոխառության գումար նշվել է 10,000,000 ՀՀ դրամ, այնուամենայնիվ փոխառության պայմանագիրը պետք է համարել կնքված 7 միլիոն ՀՀ դրամի չափով, քանի որ փոխատուն փոխառուին փաստացի վճարել է հենց 7 միլիոն դրամ:

«Ռեմեդի» և «Ռենսինիա» ՍՊԸ-ների միջև ծագել են պահանջի զիջման հետ կապված իրավահարաբերություններ:

Այսպես, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 97-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պարտատիրոջը պարտավորության հիման վրա պատկանող իրավունքը (պահանջը) կարող է նրա կողմից այլ անձի փոխանցվել գործարքով (պահանջի զիջում) կամ անցնել այլ անձի՝ օրենքի հիման վրա:

Ընդ որում, «Սիքուել» ՍՊԸ-ն ստանձնել է պատասխանատվություն «Ռեմեդի» ՍՊԸ-ի պարտավորությունների կատարման համար ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 405-րդ հոդվածով սահմանված կարգով 2 միլիոն դրամի սահմաններում:

Մասնավորապես, հիշյալ հոդվածի համաձայն՝ պահանջը զիջած սկզբնական պարտատերը նոր պարտատիրոջ առջև պատասխանատվություն է կրում նրան փոխանցված պահանջի անվավերության համար, սակայն պատասխանատվություն չի կրում պարտապանի կողմից այդ պահանջը չկատարելու համար, բացի այն դեպքից, երբ սկզբնական պարտատերը նոր պարտատիրոջ առջև երաշխավորություն է ստանձնել պարտապանի համար:

*Փոխառուի առարկությունների մասով.*

Փոխառուն առարկում է հետևյալ երկու հիմքերով՝

1. Փոխառության պայմանագրում ժամկետ նշված չլինելու արդյունքում փոխառուն կարող է վերադարձնել փոխառությունը իր նախընտրությամբ ցանկացած ժամանակ,

2. Առկա է հաշվանցի հիմք, քանի որ փոխատուն փոխառուի մասնակից և տնօրեն Արգամ Պետրոսյանի հանդեպ ունի 3 միլիոն դրամի փոխառության գծով պարտք:

Առաջին հիմքով փոխառուի փաստարկերն անհիմն են հետևյալ պատճառաբանությամբ:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 880-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ փոխառուն պարտավոր է, փոխառության պայմանագրով նախատեսված ժամկետում և կարգով, փոխատուին վերադարձնել ստացված փոխառության գումարը:

Այն դեպքում, երբ վերադարձնելու ժամկետը պայմանագրով որոշված չէ կամ որոշված է ցպահանջ, փոխառության գումարը փոխառուն պետք է վերադարձնի այդ մասին փոխատուի պահանջը ներկայացնելու օրվանից երեսուրյա ժամկետում, եթե այլ բան նախատեսված չէ պայմանագրով:

Սույն դեպքում փոխառության պայմանագրով փոխառության գումարի վերադարձման ժամկետ սահմանված չէ, ուստի կգործի վերը նշված ընդհանուր կանոնը:

Երկրորդ հիմքով փոխառուի փաստարկներն անհիմն են հետևյալ պատճառաբանությամբ.

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 426-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ պարտավորությունը լրիվ կամ մասնակի դադարում է միատեսակ հանդիպական այն պահանջի հաշվանցով, որի ժամկետը լրացել է կամ նշված չէ, կամ որոշված է պահանջի պահով: Հաշվանցի համար բավական է մեկ կողմի հայտարարությունը:

Պարտավորությունը ծագել է «Սիքուել» և «Ռենեդի» ՍՊԸ-ների միջև, հետևաբար հաշվանց կարող է կատարվել նույն սուբյեկտների միջև:

*«Ռենսինիա» ՍՊԸ-ի կողմից ներկայացված պահանջը, ինչպես նաև հայցը մասամբ անհիմն է:*

Այսպես, «Ռենսինիա» ՍՊԸ-ն պահանջում է վճարել 7 միլիոն դրամ փոխառության գումարը, դրա վրա պայմանագրով հաշվարկված տոկոսները և ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 411 հոդվածով նախատեսված տոկոսները:

Մինչդեռ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 881-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ եթե փոխառուն սահմանված ժամկետում չի վերադարձնում փոխառության գումարը, ապա փոխառության պայմանագրով նախատեսված տոկոսները դադարում են, իսկ այդ գումարին ենթակա են վճարման միայն սույն օրենսգրքի 411 հոդվածի 1-ին կետով նախատեսված չափով տոկոսներ, սկսած այն օրվանից, երբ գումարը պետք է վերադարձվեր մինչև գումարը փոխատուին վերադարձնելու օրը:

Փոխառության պայմանագրում այլ պայմաններով տոկոսներ վճարելու վերաբերյալ համաձայնությունն առչինչ է:

Բացի այդ, խնդրի պայմանների համաձայն՝ փոխառուն նշել է, որ 1 միլիոն դրամ վճարել է «Սիքուել» ՍՊԸ-ին՝ բանկային փոխանցման միջոցով, 15.05.2018 թվականին:

Փաստորեն փոխառուն պարտքի մասնակի մարումը կատարել է մինչև պահանջի զիջման պահը, հետևաբար այդ մասով պարտքը պետք է համարել մասամբ մարված:

Անգամ եթե փոխառուն պարտքի մարումը կատարած լիներ պահանջի զիջումից հետո, ապա միննույն է վերջինիս գործողությունն իրավաչափ է, քանի որ չի տեղեկացվել պահանջի զիջման մասին, իսկ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 397-րդ հոդվածի 3-րդ կետի համաձայն՝ եթե պարտապանը գրավոր չի տեղեկացվել պարտատիրոջ իրավունքներն այլ անձի անցնելու մասին, ապա նոր պարտատերը կրում է իր համար դրանից բխող անբարենպաստ հետևանքների ռիսկը: Այդ դեպքում պարտավորության կատարումն սկզբնական պարտատիրոջը համարվում է կատարված պատշաճ պարտատիրոջը:

«Սիքուել» ՍՊԸ-ի փաստարկն առ այն, որ վերջինս պատասխանատու չէի փոխառուի կողմից «Ռենսինիա» ՍՊԸ-ի առջև պարտավորության կատարման համար, անհիմն են, քանի որ ինչպես արդեն նշվեց՝ «Սիքուել» ՍՊԸ-ն երաշխավորություն է ստանձնել փոխառուի պարտավորության պատշաճ կատարումն ապահովելու համար, սակայն վերջինիս պատասխանատվությունը սահմանափակված է 2 միլիոն դրամի սահմաններում:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 375-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ երաշխավորը, երաշխավորության պայմանագրով, այլ անձի պարտատիրոջ առջև պարտավորվում է պատասխանատվություն կրել այդ անձի կողմից իր պարտավորությունը լրիվ կամ մասնակի կատարելու համար:

Այսինքն, պարտապանի կողմից պարտավորությունը մասնակի կատարելու համար երաշխավորությունը սույն խնդրի դեպքում իրավաչափ է:

Ինչ վերաբերում է տոկոսների հաշվարկին, ապա այդ մասով արդեն իսկ նշվեց, որ կետանցի ժամանակահատվածի համար պահանջվել կարող են միայն ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 411-րդ հոդվածով սահմանված տոկոսները:

«Ռեմեդի» ՍՊԸ-ի առարկությունն առ այն, որ վերջինս պարտավոր չէ վճարել «Ռեեսինիա» ՍՊԸ-ին, անհիմն է, քանի որ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 399-րդ հոդվածի համաձայն՝ սկզբնական պարտատիրոջ իրավունքը նոր պարտատիրոջն է անցնում իրավունքի անցման պահին գոյություն ունեցող ծավալով և պայմաններով, եթե այլ բան նախատեսված չէ օրենքով կամ պայմանագրով: Մասնավորապես, նոր պարտատիրոջն են անցնում պարտավորության կատարումն ապահովող, ինչպես նաև պահանջի հետ կապված այլ իրավունքները՝ ներառյալ չվճարված տոկոսների նկատմամբ իրավունքը:

*Հայրը սահմանված ժամկետին ուշ ներկայացնելու մասով «Ռեմեդի» ՍՊԸ-ի փաստարկների վերաբերյալ հարկ է նշել հետևյալը:*

Խնդրի փաստերի համաձայն՝ փոխառության պայմանագիրը կնքվել է 12.03.2017 թվականին:

Փոխատուն գումարը փոխանցել է մեկ ամսվա ընթացքում, որից մեկ ամիս անց դիմել է վերադարձման պահանջով:

Այսինքն, փոխառուն 12.05.2017 թվականին պահանջ է ներկայացրել փոխառուին գումարի վերադարձման համար:

Այդ պահից սկսած փոխառուն ունեցել է երեսուն օր գումարը վերադարձնելու համար:

Այսինքն, 12.06.2017 թվականին փոխառության գումարը պետք է վերադարձվեր, իսկ 13.06.2021 թվականից փոխատուի իրավունքները համարվում են խախտված:

Պահանջը զիջելուց հետո «Ռեեսինիա» ՍՊԸ-ն դատարան է դիմել 22.09.2021 թվականին:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 331-րդ հոդվածի համաձայն՝ հայցային վաղեմություն է համարվում իրավունքը խախտված անձի հայցով իրավունքի պաշտպանության ժամանակահատվածը:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 332-րդ հոդվածի համաձայն՝ հայցային վաղեմության ընդհանուր ժամկետը երեք տարի է, իսկ 333-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ պահանջների որոշ տեսակների համար օրենքով կարող են սահմանվել հայցային վաղեմության ընդհանուր ժամկետի համեմատությամբ կրճատ կամ ավելի երկար հատուկ ժամկետներ:

Փոխառության պայմանագրի դեպքում չկան հատուկ հայցային վաղեմության ժամկետներ, հետևաբար գործում է ընդհանուր երեք տարվա կանոնը:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 337-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ հայցային վաղեմության ժամկետի ընթացքն սկսվում է այն օրվանից, երբ անձն իմացել է կամ պետք է իմացած լիներ իր իրավունքի խախտման մասին:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 338-րդ հոդվածի համաձայն՝ պարտավորության մեջ անձանց փոփոխվելը չի հանգեցնում հայցային վաղեմության ժամկետի և դրա հաշվարկման կարգի փոփոխման:

Այսինքն, անկախ պահանջի զիջման փաստից՝ հայցային վաղեմության ժամկետը սկսում է հոսել այն պահից, երբ փոխատուն իմացել է իր իրավունքի խախտման մասին, իսկ այդ պահը՝ 13.06.2021 թվականն է, հետևաբար այս դեպքում «Ռեեսինիա» ՍՊԸ-ն բաց է թողել հայցային վաղեմության ժամկետը:

**Հարց 2. /5 միավոր/**

Սույն ենթահարցին պատասխանելու համար անհրաժեշտ է անդրադառնալ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 397-405-րդ հոդվածներին, ինչպես նաև 877-878-րդ և 880-րդ հոդվածներին:

## Խնդիր 2

### Հարց 1. /8 միավոր/

Սույն հարցի շրջանակներում անհրաժեշտ է անդրադառնալ Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքով սահմանված գործատուի նախաձեռնությամբ աշխատանքային պայմանագրի լուծման հիմքերին, կարգին, ինչպես նաև կարգապահական տույժեր կիրառելու ընթացակարգին:

Այսպես, խնդրի փաստերի համաձայն Սիմոնյանի և «Ֆինանս Գլոբալ Լիմիթեդ» ՍՊԸ-ի (այսուհետ նաև՝ Ընկերություն) միջև ծագել են աշխատանքային հարաբերություններ:

ՀՀ աշխատանքային օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 14-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ աշխատողի և գործատուի միջև աշխատանքային հարաբերությունները ծագում են աշխատանքային օրենսդրությամբ սահմանված կարգով կնքված գրավոր աշխատանքային պայմանագրով կամ աշխատանքի ընդունման մասին անհատական իրավական ակտով:

Աշխատողի անմիջական պարտականությունները ներառում են հաճախորդների հետ շփումը, այդ թվում՝ վերջիններիս տեղեկատվության տրամադրումը:

Օրենսգրքի 109-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի համաձայն՝ աշխատանքային պայմանագիրը լուծվում է, ի շարս այլնի, նաև գործատուի նախաձեռնությամբ:

Օրենսգրքի 113-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ գործատուն իրավունք ունի աշխատողի հետ լուծելու անորոշ ժամկետով կնքված աշխատանքային պայմանագիրը, ինչպես նաև որոշակի ժամկետով կնքված աշխատանքային պայմանագիրը նախքան դրա գործողության ժամկետի լրանալը (...) աշխատողի նկատմամբ վստահությունը կորցնելու դեպքում:

Օրենսգրքի 122-րդ հոդվածի համաձայն՝ գործատուն իրավունք ունի Օրենսգրքի 113-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքով լուծելու աշխատանքային պայմանագիրը վստահությունը կորցրած աշխատողի հետ, եթե աշխատողը՝

1) դրամական կամ ապրանքային արժեքներ սպասարկելիս կատարել է այնպիսի արարքներ, որի հետևանքով գործատուն կրել է նյութական վնաս.

2) ուսումնադաստիարակչական գործառույթներ իրականացնող աշխատողը թույլ է տվել տվյալ աշխատանքը շարունակելու հետ անհամատեղելի արարք.

3) հրապարակել է պետական, ծառայողական, առևտրային կամ տեխնոլոգիական գաղտնիքներ կամ դրանց մասին հայտնել է մրցակից կազմակերպությանը:

Այսինքն, գործատուի նախաձեռնությամբ աշխատանքային պայմանագրի լուծման հիմքերից է համարվում նաև աշխատողի նկատմամբ վստահությունը կորցնելը, որն, ի թիվս այլնի, դրսևորվել է նաև գործատուի վերաբերյալ գաղտնի տեղեկատվություն հրապարակելու կամ մրցակցին հայտնի դարձնելու միջոցով:

Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 141-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ տեղեկատվությունը ծառայողական, առևտրային կամ բանկային գաղտնիք է, եթե այն երբորդ անձանց անհայտ լինելու ուժով ունի իրական կամ հնարավոր առևտրային արժեք, չկա

օրինական հիմքերով այն ազատորեն ստանալու հնարավորությունն և տեղեկատվությունն ունեցողը միջոցներ է ձեռնարկում դրա գաղտնիության պահպանման համար:

Ընկերության հաճախորդների վերաբերյալ տեղեկատվությունը հանդիսանում է Ընկերության առևտրային գաղտնիքը, քանի որ բացակայում է դրան հասանելիությունն առանց Ընկերության թույլտվության և առկա չէ այն այլ կերպ ձեռքբերելու հնարավորություն:

Օրենսգրքի 123-րդ հոդվածի համաձայն.

«Սույն օրենսգրքի 113-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ, 6-րդ, 8-10-րդ կետերով նախատեսված դեպքերում գործատուն իրավունք ունի աշխատանքային պայմանագիրը լուծելու՝ առանց աշխատողին ծանուցելու»: Օրենսգրքի 222-րդ հոդվածի համաձայն՝ կարգապահական պատասխանատվության կարող է ենթարկվել միայն աշխատանքային կարգապահությունը խախտած աշխատողը:

Օրենսգրքի 223-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի համաձայն՝ աշխատանքային կարգապահությունը խախտելու համար կարող են կիրառվել հետևյալ կարգապահական տույժերը՝ (...): Օրենսգրքի 113-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ, 6-րդ, 8-10-րդ կետերի հիմքերով աշխատանքային պայմանագրի լուծում:

Այսպիսով, կարգապահական խախտման դեպքում որպես կարգապահական տույժ կարող է կիրառվել նաև վստահությունը կորցնելու հիմքով աշխատանքային պայմանագրի լուծումը:

Ընդ որում, վստահությունը կորցնելու հիմքով աշխատանքային պայմանագրի լուծման դեպքում աշխատողին ծանուցելու պարտականությունը գործատուն չունի:

Միաժամանակ, Օրենսգրքի 226-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն.

«1. Մինչև կարգապահական տույժի կիրառումը գործատուն պետք է աշխատողից գրավոր կերպով պահանջի խախտման մասին գրավոր բացատրություն՝ տրամադրելով ողջամիտ ժամկետ: Եթե գործատուի սահմանած ողջամիտ ժամկետում աշխատողն առանց հարգելի պատճառների չի ներկայացնում գրավոր բացատրություն, ապա կարգապահական տույժը կարող է կիրառվել առանց գրավոր բացատրության»:

Օրենսգրքի 227-րդ հոդվածի համաձայն.

«1. Կարգապահական տույժը կարող է կիրառվել խախտումը հայտնաբերելուց հետո՝ մեկ ամսվա ընթացքում, չհաշված աշխատողի ժամանակավոր անաշխատունակության պատճառով բացակայության, գործուղման կամ արձակուրդի մեջ գտնվելու ժամանակահատվածները:

2. Կարգապահական տույժը չի կարող կիրառվել, եթե խախտումը կատարելու օրվանից անցել է վեց ամիս: Եթե խախտումը հայտնաբերվում է աուդիտի, ֆինանսատնտեսական գործունեության, գումարային կամ այլ արժեքների ստուգման (գույքագրման) ընթացքում, ապա կարգապահական տույժը կարող է կիրառվել, եթե խախտումը կատարելու օրվանից անցել է ոչ ավելի, քան մեկ տարի»:

Սույն խնդրի փաստերի համաձայն՝ կարգապահական խախտումը կատարվել է 13.07.2020 թվականին, հայտնաբերվել է 15.09.2020 թվականին:

Աշխատողը արձակուրդում է գտնվել 10.08.2020 թվականից մինչև 27.12.2020 թվականը:

Գործատուն աշխատանքային պայմանագիրը լուծել է 28.12.2020 թվականին:

Օրենսգրքի 114-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ աշխատանքային պայմանագրի լուծումը գործատուի նախաձեռնությամբ արգելվում է աշխատողի արձակուրդում գտնվելու ժամանակահատվածում:

Այսպիսով, վկայակոչված իրավական նորմերի և խնդրի փաստերի համադրման արդյունքում կարող են գալ հետևյալ եզրահանգմանը:

Գործատուն աշխատողին ազատել է աշխատանքից վերջինսի արձակուրդից վերադառնալուց հետո, այսինքն բացակայել է աշխատանքային պայմանագիրը լուծելու՝ Օրենսգրքի 114-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով սահմանված արգելքը:

Աշխատանքային պայմանագրի լուծման համար առկա են եղել անհրաժեշտ հիմքերը, իսկ գործատուն պահպանել է կարգապահական վարույթի ընթացակարգը, մասնավորապես գրավոր բացատրագիր է պահանջել աշխատողից:

Քանի որ Օրենսգրքը սահմանում է միայն աշխատանքային պայմանագրի լուծման արգելք աշխատողի արձակուրդում գտնվելու ժամանակահատվածում, այլ ոչ թե ընդհանրապես կարգապահական վարույթ հարուցելու արգելք, ապա այդ մասով Ընկերության գործողությունները ևս իրավաչափ են:

Կարգապահական տույժը կիրառվել է 28.12.2020 թվականին, իսկ խախտումը կատարվել է 13.07.2020 թվականին, այսինքն պահպանվել է նաև 6-ամսյա ժամկետի պահանջը:

## **Հարց 2. /6 միավոր/**

Սույն ենթահարցի շրջանակներում անհրաժեշտ է անդրադառնալ ՀՀ աշխատանքային օրենսգրքի 113-րդ և 114-րդ հոդվածներով սահմանված կարգավորումներին:

### **Խնդիր 3**

## **Հարց 1. /5 միավոր/**

Սույն հարցի շրջանակներում անհրաժեշտ է անդրադառնալ «Մնանկության մասին» ՀՀ օրենքով (այսուհետ՝ Օրենք) սահմանված անվճարունակության հատկանիշներին:

Օրենքի 3-րդ հոդվածի համաձայն.

«1. Պարտապանը կարող է սնանկ ճանաչվել դատարանի վճռով՝ սեփական նախաձեռնությամբ (կամավոր սնանկության դիմում) կամ պարտատիրոջ պահանջով (հարկադրված սնանկության դիմում), եթե պարտապանն անվճարունակ է:

2. Պարտապանը՝ դատարանի վճռով կարող է սնանկ ճանաչվել՝

1) հարկադրված սնանկության դիմումի հիման վրա՝ եթե թույլ է տվել օրենքով սահմանված նվազագույն աշխատավարձի երկուհարապատիկը գերազանցող անվիճելի վճարային պարտավորությունների 90-օրյա կամ ավելի ժամկետով կետանց, և վճռի կայացման պահին նշված կետանցը շարունակվում է (փաստացի անվճարունակություն): Վճարային պարտավորությունն անվիճելի է, եթե պարտապանը չի առարկում դրա դեմ, կամ եթե առարկում է հիշյալ պարտավորության դեմ, սակայն՝

ա) վճարային պարտավորությունը ճանաչված է օրինական ուժի մեջ մտած վճռով կամ դատավճռով, և բացակայում է հաշվանցի հնարավորությունը,

բ) պահանջը հիմնված է գրավոր գործարքի վրա, և պարտապանը չի ապացուցում, որ տվյալ պահանջի դեմ առարկելու բավարար հիմքեր ունի (ներառյալ՝ պահանջի հաշվանցը),

գ) պահանջը բխում է օրենքով սահմանված հարկեր, տուրքեր, այլ վճարներ վճարելու պարտապանի պարտավորությունից, և պարտապանը չի ապացուցում, որ տվյալ պահանջի դեմ առարկելու բավարար հիմքեր ունի (ներառյալ՝ պահանջի հաշվանցը),

դ) պահանջի չվիճարկվող մասը գերազանցում է օրենքով սահմանված նվազագույն աշխատավարձի երկուհազարապատիկը.»:

Խնդրի փաստերի համաձայն՝ Գնորդը 12.09.2021 թվականին ընդունում է ապրանքը, սակայն հրաժարվում է դրա համար վճարել՝ պնդելով, որ կվճարի, երբ հավաստիանա դրանց որակի մեջ:

Մատակարարը 14.12.2021 թվականին դիմում է ՀՀ սնանկության դատարան գնորդին սնանկ ճանաչելու պահանջով և դիմումն ընդունվում է վարույթ:

Վճարման ենթակա գումարը կազմում է 12 միլիոն դրամ:

Գնորդն ընդունելով ապրանքները պետք է դրանց համար վճարեր 12.09.2021 թվականին, հետևաբար 13.09.2021 թվականից սկսած վերջինս համարվում է կետանցող:

Սնանկ ճանաչելու մասին դիմումը ներկայացվել է 14.12.2021 թվականին, այսինքն պարտավորությունը կետանցելուց հետո 92-րդ օրը:

Պարտավորության չափը գերազանցում է նվազագույն աշխատավարձի երկուհազարապատիկը:

Արդյունքում, առերևույթ առկա են անվճարունակության հատկանիշներ:

Միաժամանակ, պարտապանն ունի առարկելու բավարար հիմքեր, քանի որ նախ համաձայն չէ ապրանքի որակի հետ, ապա ներկայացնում է հաշվանցի հնարավորության վերաբերյալ հիմնավորումներ:

Էական է նշել, որ սույն դեպքում չեն կարող կիրառվել ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 427-րդ հոդվածով սահմանված հաշվանցի անթույլատրելիության դեպքերը:

Այսպես, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 427-րդ հոդվածի համաձայն՝

«Պահանջների հաշվանց չի թույլատրվում, եթե՝

1) մյուս կողմի դիմումով պահանջի նկատմամբ ենթակա է կիրառման հայցային վաղեմության ժամկետ և այդ ժամկետը լրացել է.

2) դրանք վերաբերում են կյանքին կամ առողջությանը պատճառված վնասների հատուցմանը.

3) դրանք վերաբերում են ալիմենտի բռնագանձմանը:

Պահանջների հաշվանց չի թույլատրվում նաև օրենքով կամ պայմանագրով նախատեսված այլ դեպքերում.»:

Չնայած այն հանգամանքին, որ խնդրի փաստերի համաձայն փոխառության գումարը պահանջելու համար հայցային վաղեմության ժամկետը լրացել է, սակայն սնանկության գործի շրջանակներում դատարանը չի կարող գնահատական տալ պարտապանի կողմից բարձրացված հաշվանցի հնարավորությանը, քանի որ դա նյութաիրավական վեճի առարկա է (մասնավորապես, հայցային վաղեմության ժամկետի հաշվարկի սկզբի և այն վերականգնելու հնարավորության հարցերի համատեքստում):

Նշվածը պայմանավորված է նաև այն հանգամանքով, որ պարտատերը չի կարող սնանկության դատարանին դիմել փոխառության գումարի պահանջի նկատմամբ հայցային վաղեմություն կիրառելու պահանջով:

Հաշվանց կատարելու հնարավորությունը սահմանափակված է նաև Օրենքի 39-րդ հոդվածի 1-ին մասի «դ» կետով սահմանված կարգավորման ուժով, որի համաձայն՝ սնանկության վերաբերյալ դիմումը վարույթ ընդունելու պահից արգելվում է պարտատիրոջ՝ մինչև պարտապանին սնանկ ճանաչելու մասին դիմում ներկայացնելը պարտապանի նկատմամբ ստանձնած ցանկացած պարտավորության հաշվանցը՝ պարտապանի նկատմամբ ունեցած իր պահանջի հետ:

Այսպիսով, չնայած այն հանգամանքին, որ պարտապանի կողմից չվիճարկվող գումարի չափն ավելին է, քան նվազագույն աշխատավարձի երկուհազարապատիկը, այնուամենայնիվ պարտապանը

հիմնավորում է հաշվանցի հնարավորությունը, որի պարագայում պարտավորությունն այլևս անվիճելի չէ:

## **Հարց 2. /4 միավոր/**

Սույն հարցի շրջանակներում անհրաժեշտ է անդրադառնալ «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 46-րդ հոդվածի կարգավորումներին:

## **Հարց 3. /3 միավոր/**

Սույն հարցի շրջանակներում անհրաժեշտ է քննարկման առարկա դարձնել «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 40-րդ հոդվածի կարգավորումները:

Մասնավորապես, Օրենքի 40-րդ հոդվածի համաձայն.

« (...)

2. Պարտատիրոջ կամ պարտապանի դիմումով դատարանը մորատորիումի ընթացքում թույլատրում է պարտապանի և պարտատիրոջ միատեսակ հանդիպական պարտավորությունների հաշվանցի կատարումը: Ֆինանսական գործարքներից և ապահովության պայմանագրերից բխող պարտավորությունների հաշվանցի առանձնահատկությունները սահմանվում են սույն օրենքի 40.1-ին հոդվածով:

3. Հաշվանց չի թույլատրվում, եթե՝

ա) պարտապանի նկատմամբ ունեցած պահանջը պարտատիրոջն է փոխանցվել այլ անձի կողմից՝ սնանկության դիմում ներկայացնելուն նախորդած 90 օրվա ընթացքում, և այդ ընթացքում պարտապանը անվճարունակ էր.

բ) պարտատերը պարտապանի նկատմամբ պարտավորությունը ստանձնել է սնանկության դիմում ներկայացնելուն նախորդած 90 օրվա ընթացքում՝ պարտապանի նկատմամբ իր ունեցած պահանջի հետ հաշվանց կատարելու նպատակով.

գ) հաշվանցի արդյունքում կխախտվի պահանջների բավարարման՝ օրենքով սահմանված հերթականությունը և համամասնությունը:»:

Սույն դեպքում հաշվանց չէր կարող կատարվել, քանի որ պահանջի զիջումը տեղի է ունեցել սնանկության դիմում ներկայացնելուն նախորդող 90-օրյա ժամկետում:

## **Խնդիր 4.**

### **Հարց 1. /5 միավոր/**

Սույն հարցի շրջանակներում անհրաժեշտ է անդրադառնալ «Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի իրավակարգավորումներին:

Մասնավորապես, հիշյալ հոդվածի համաձայն.

«1. Ընկերության մասնակիցն իրավունք ունի ընկերության կանոնադրական կապիտալում իր բաժնեմասը (դրա մասը) վաճառել կամ այլ ձևով օտարել տվյալ ընկերության մեկ կամ մի քանի մասնակիցների:

2. Ընկերության մասնակցի կողմից իր բաժնեմասը (դրա մասը) երրորդ անձանց օտարել թույլատրվում է, եթե այլ բան նախատեսված չէ ընկերության կանոնադրությամբ:

3. Ընկերության մասնակիցներն իրենց բաժնեմասերին համամասնորեն օգտվում են մասնակցի բաժնեմասը (դրա մասը) գնելու նախապատվության իրավունքից (բացառությամբ «Բանկերի, վարկային կազմակերպությունների, ներդրումային ընկերությունների և ապահովագրական ընկերությունների սնանկության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված դեպքի): Ընկերության մասնակիցը, որը ցանկանում է վաճառել իր բաժնեմասը (դրա մասը), պարտավոր է այդ մասին գրավոր տեղյակ պահել ընկերությանը՝ նշելով գինն ու վաճառքի մյուս պայմանները: Ընկերությունն այդ մասին գրությամբ՝ պատվիրված նամակով կամ անձամբ հանձնելով, հայտնում է ընկերության մյուս մասնակիցներին:

Այն դեպքում, երբ ընկերության մասնակիցները տեղեկացվելու օրվանից մեկ ամսվա ընթացքում կամ ընկերության կանոնադրությամբ կամ նրա մասնակիցների համաձայնությամբ նախատեսված այլ ժամկետում չեն օգտվում գնելու նախապատվության իրավունքից (բացառությամբ «Բանկերի և վարկային կազմակերպությունների սնանկության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված դեպքի), մասնակցի բաժնեմասը կարող է օտարվել երրորդ անձանց՝ նույն պայմաններով և ոչ պակաս այն գնից, որն առաջարկվել էր նրա մասնակիցներին:

4. Ընկերության կանոնադրությամբ կարող է նախատեսվել ընկերության մասնակցի բաժնեմասի (դրա մասի) ձեռքբերման՝ սույն հոդվածի 3-րդ կետով նախատեսված՝ ընկերության նախապատվության իրավունքն այն դեպքում, երբ ընկերության մյուս մասնակիցները չեն օգտագործել բաժնեմասը (դրա մասը) գնելու իրենց նախապատվության իրավունքը:

5. Սույն օրենքով նախատեսված՝ գնելու նախապատվության իրավունքի խախտմամբ բաժնեմասի վաճառքի դեպքում ընկերության ցանկացած մասնակից և (կամ) ընկերությունը, եթե ընկերության կանոնադրությամբ նախատեսված է ընկերության նախապատվության իրավունքը, իրավունք ունի 6 ամսվա ընթացքում դատական կարգով պահանջել անվավեր ճանաչելու այդ գործարքը, սկսած այն պահից, երբ նրանք իմացել են կամ պարտավոր էին իմանալ խախտման մասին:

6. Սույն օրենքով նախատեսված բաժնեմասը գնելու նախապատվության իրավունքի զիջում չի թույլատրվում:»:

Խնդրի փաստերի համաձայն՝ «Արթսեմինդասթրիս» ՍՊԸ-ն (այսուհետ՝ Ընկերություն) ունի երեք մասնակից՝ Արտակ Ամիրանյանը 34 տոկոսով, «Իքս» ՍՊԸ-ն 27 տոկոսով և Ստեփան Ամիրանյանը 39 տոկոսով:

Այսինքն, յուրաքանչյուր բաժնետիրոջ կողմից իր բաժնեմասն օտարելու դեպքում օրենքի ուժով գործում է մյուս մասնակիցների նախապատվության իրավունքն ապահովելու կառուցակարգը:

Ընդ որում, վերը նշված հոդվածի վերլուծությունից բխում է, որ գնելու նախապատվության իրավունքը ծագում է այն դեպքում, երբ ընկերության մասնակիցը ցանկանում է վաճառել /հատուցմամբ օտարել/ իրեն պատկանող բաժնեմասը:

Հոդվածի վերլուծությունից բխում է նաև, որ հատուցելի գործարքով բաժնեմասի օտարման դեպքում մյուս մասնակիցների գնելու նախապատվության իրավունքը գործում է առանց վերապահումների, այդ թվում՝ առանց ձեռքբերող սուբյեկտի որոշակի շրջանակի համար բացառություններ սահմանելու:

Էական է նշել, որ գնման նախապատվության իրավունքի զիջում չի թույլատրվում, ուստի գնման նախապատվության իրավունք ունի միայն ընկերության մասնակիցը:

*Սույն վերլուծության կիրառությունը խնդրի փաստերի նկատմամբ:*

Այսպես, «Իքս» ՍՊԸ-ի ընդհանուր ժողովը 12.03.2021 թվականին որոշում է կայացնում Ընկերությունում ունեցած իր 27 տոկոս բաժնեմասը վաճառել «Իքս» ՍՊԸ-ի տնօրեն և հիսուն տոկոսից ավելի մասնակցություն ունեցող Արշավիր Ամիրանյանին:

Այսինքն, տեղի է ունեցել բաժնեմասնակցության հատուցմամբ օտարում, որի դեպքում Ընկերության մյուս երկու բաժնետերերն ունեն գնման նախապատվության իրավունք:

«Իքս» ՍՊԸ-ի փաստարկներն առ այն, որ օտարումը տեղի է ունեցել վերջինիս հետ փոխկապակցված անձի, որևէ նշանակություն չունի, քանի որ Ընկերության մասնակիցների գնման նախապատվության իրավունքն անպայմանական է և ծագում է ցանկացած հատուցմամբ օտարման դեպքում:

Ստեփան Ամիրանյանի կողմից ուղարկված փաստաթղթի ուսումնասիրությունից բխում է, որ Ստեփան Ամիրանյանն իր նախապատվության իրավունքը զիջել է իր եղբորը: Ընդ որում՝ գրությունից ակնհայտ է, որ խոսքը հենց զիջման մասին է, այլ ոչ թե պարզապես իր անունից այդ նախապատվության իրավունքի իրացման մասին, քանի որ նամակում օգտագործվում է «փոխանցել» եզրույթը, որի դեպքում գործում է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 397-րդ հոդվածի 1-ին կետի կանոնը / Պարտատիրոջը պարտավորության հիման վրա պատկանող իրավունքը (պահանջը) կարող է նրա կողմից այլ անձի փոխանցվել գործարքով (պահանջի զիջում) կամ անցնել այլ անձի՝ օրենքի հիման վրա:/:

Ստեփան Ամիրանյանի կողմից տրված նամակը անվավեր գործարք է, քանի որ հակասում է «Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասի պահանջին:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 305-րդ հոդվածի համաձայն՝ Օրենքի կամ այլ իրավական ակտերի պահանջներին չհամապատասխանող գործարքն անվավեր է, եթե օրենքը չի սահմանում, որ նման գործարքն առոչինչ է կամ չի նախատեսում խախտման այլ հետևանքներ:

«Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի 5-րդ մասը սահմանում է հատուկ հայցային վաղեմության ժամկետ նմանատիպ գործարքներն անվավեր ճանաչելու համար:

Խնդրի փաստերի համաձայն՝ Արտակ Ամիրանյանն իր նախապատվության իրավունքի խախտման մասին իմացել է 22.06.2021 թվականին, Ստեփան Ամիրանյանը նույնպես իր իրավունքի խախտման մասին իմացել է նույն կամ առավելագույնը հաջորդ օրը, քանի որ դրա մասին Արտակ Ամիրանյանը վերջինիս հայտնել է անհապաղ:

Հայրը ներկայացվել է 26.12.2021 թվականին:

Այսպիսով, հայցվորները բաց են թողել վեցամսյա հայցային վաղեմության ժամկետը, սակայն քանի որ պատասխանողները չեն դիմել դատարանին հայցային վաղեմությունը կիրառելու համար, ուստի գործը կքննվի ըստ էության ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 336-րդ հոդվածի 1-ին և 2-րդ կետով սահմանված հետևյալ կանոնների համաձայն.

«1. Իրավունքի պաշտպանության մասին պահանջը դատարանը քննության է ընդունում հայցային վաղեմության ժամկետը լրանալուց անկախ:

2. Դատարանը հայցային վաղեմությունը կիրառում է միայն վիճող կողմի դիմումով:»:

Շահագրգռվածությամբ և խոշոր գործարքներին անդրադարձ է կատարվում հաջորդ հարցի շրջանակներում:

**Հարց 2. /5 միավոր/**

Սույն հարցի շրջանակներում անհրաժեշտ է անդրադառնալ «Մահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների մասին» ՀՀ օրենքի 47-րդ և 48-րդ հոդվածների կարգավորումներին, ինչպես նաև «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի 60-61-րդ հոդվածներին:

**«Հոդված 47. Շահագրգռվածությունն ընկերության գործարքը կնքելիս**

1. Գործարքները, որոնց կատարման մեջ առկա է ընկերության խորհրդի անդամի, ընկերության գործադիր մարմնի գործառույթները կատարող անձի շահագրգռվածությունը կամ ընկերության մասնակցի շահագրգռվածությունը, և որոնք ունեն ընկերության մասնակիցների ընդհանուր ձայների թվի քսան և ավելի տոկոսը, չեն կարող կատարվել առանց ընդհանուր ժողովի համաձայնության:

Նշված անձինք ընկերության կողմից ճանաչվում են գործարք կնքելու մեջ շահագրգռված այն դեպքերում, եթե նրանք կամ նրանց ամուսինները, ծնողները, երեխաները, եղբայրները, քույրերը (այսուհետ՝ փոխկապակցված անձինք)՝

ա) հանդիսանում են գործարքի կողմ կամ ընկերության հետ իրենց հարաբերություններում հանդես են գալիս երրորդ անձանց շահերից.

բ) տիրապետում են (յուրաքանչյուրն առանձին-առանձին կամ համակցության մեջ) գործարքի կողմ հանդիսացող կամ ընկերության հետ հարաբերություններում երրորդ անձանց շահերից հանդես եկող իրավաբանական անձի բաժնեմասերի (փայի, բաժնետոմսի) քսան և ավելի տոկոսին.

գ) պաշտոններ են զբաղեցնում գործարքի կողմ հանդիսացող կամ ընկերության հետ հարաբերություններում երրորդ անձանց շահերից հանդես եկող իրավաբանական անձի կառավարման մարմիններում.

դ) ընկերության կանոնադրությամբ նախատեսված այլ դեպքերում:

2. Ընկերության կողմից գործարքի կատարման մասին որոշումը, որի կատարման մեջ առկա է շահագրգռվածությունը, ընդունվում է ընդհանուր ժողովի կողմից ընկերության գործարքի կատարման մեջ չշահագրգռված մասնակիցների ընդհանուր ձայների թվի մեծամասնությամբ:

3. Գործարքի կատարումը, որի կատարման դեպքում առկա է շահագրգռվածությունը, չի պահանջում սույն հոդվածի 2-րդ կետով նախատեսված ընդհանուր ժողովի որոշումն այն դեպքում, եթե գործարքը կատարվում է ընկերության և մյուս կողմի միջև առօրյա տնտեսական գործունեության շրջանակներում, որը տեղ է գտել մինչև այն պահը, որից սկսած գործարքը կատարելու մեջ շահագրգռված անձը ճանաչվում է այդպիսին՝ սույն հոդվածի 1-ին կետին համապատասխան (որոշումը չի պահանջվում մինչև հաջորդ ընդհանուր ժողովի անցկացման օրը):

4. Գործարքը, որի կատարման մեջ առկա է շահագրգռվածությունը, որը կատարվել է սույն հոդվածով նախատեսված պահանջների խախտմամբ, կարող է դատական կարգով ճանաչվել անվավեր՝ ընկերության կամ նրա մասնակցի հայցով:

5. Սույն հոդվածը չի կիրառվում մեկ մասնակցից բաղկացած ընկերությունների նկատմամբ, որն իրականացնում է տվյալ ընկերության գործադիր մարմնի գործառույթները:

**Հոդված 48. Խոշոր գործարքները**

1. Խոշոր է հանդիսանում այն գործարքը կամ մի քանի փոխկապակցված գործարքները, որոնք կապված են ընկերության կողմից ուղղակիորեն կամ անուղղակիորեն գույք ձեռք բերելու, օտարելու կամ օտարելու հնարավորության հետ, որի արժեքը կազմում է նման գործարքներ կատարելու մասին որոշման ընդունման օրվա դրությամբ ընկերության զուտ ակտիվների արժեքի 25 տոկոսից ավելին,

եթե ընկերության կանոնադրությամբ նախատեսված չէ խոշոր գործարքի այլ չափ: Խոշոր չեն ճանաչվում այն գործարքները, որոնք կատարվում են ընկերության առօրյա տնտեսական գործունեության ընթացքում:

2. Խոշոր գործարք կատարելու մասին որոշումն ընդունվում է ընդհանուր ժողովի կողմից:

3. Ընկերության խորհրդի ստեղծման դեպքում ընկերության կողմից իր գուտ ակտիվների արժեքի 20-50 տոկոսը կազմող արժեքով ուղղակի կամ անուղղակի գույք ձեռք բերելու, օտարելու կամ օտարման հնարավորության հետ կապված խոշոր գործարքներ կատարելու մասին որոշման ընդունումն ընկերության կանոնադրությամբ կարող է վերապահվել ընկերության խորհրդի իրավասությանը:

4. Սույն հոդվածի պահանջների խախտմամբ կատարված խոշոր գործարքը կարող է ճանաչվել անվավեր դատարանի վճռով:

5. Ընկերության կանոնադրությամբ կարող է նախատեսվել, որ խոշոր գործարքներ կատարելու համար չի պահանջվում ընդհանուր ժողովի կամ ընկերության խորհրդի որոշումը:

6. Սույն հոդվածը չի կիրառվում մեկ մասնակցից բաղկացած ընկերությունների նկատմամբ, որն իրականացնում է տվյալ ընկերության գործադիր մարմնի գործառույթները:»

«Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի 60-61-րդ հոդվածների համաձայն.

**«Հոդված 60. Ընկերության գույքի ձեռքբերման կամ օտարման հետ կապված խոշոր գործարքները**

1. Խոշոր են համարվում՝

ա) մեկ կամ մի քանի փոխկապված գործարքները, որոնք, բացառությամբ Ընկերության բնականոն տնտեսական գործունեության շրջանակներում կատարվող գործարքների, ուղղակի կամ անուղղակի կապված են Ընկերության կողմից գույքի ձեռքբերման, օտարման կամ գույքի օտարման հնարավորության հետ, և որոնց արժեքը գործարքը կնքելու մասին որոշում ընդունելու պահի դրությամբ կազմում է Ընկերության ակտիվների հաշվեկշռային արժեքի 50 և ավելի տոկոսը.

բ) մեկ կամ մի քանի փոխկապված գործարքները, որոնց առարկա է հանդիսանում Ընկերության հասարակ (սովորական) կամ հասարակ (սովորական) բաժնետոմսերի փոխարկվող արտոնյալ բաժնետոմսերի (բացառությամբ ներդրումային ֆոնդերի բաժնետոմսերի) տեղաբաշխումը, որը կազմում է Ընկերության կողմից արդեն տեղաբաշխված հասարակ (սովորական) բաժնետոմսերի 50 և ավելի տոկոսը:

2. Խոշոր գործարքի առարկա հանդիսացող գույքի արժեքը որոշվում է սույն օրենքի 59-րդ հոդվածով սահմանված կարգով:

**Հոդված 61. Ընկերության գույքի ձեռքբերման կամ օտարման հետ կապված խոշոր գործարքների կնքումը**

1. Խոշոր գործարք կնքելու մասին որոշումը ընդունում է ժողովը՝ դրան մասնակցող բաժնետերերի (քվեարկող բաժնետոմսերի սեփականատերերի) ձայների 3/4-ով, եթե Ընկերության կանոնադրությամբ ձայների առավել մեծ քանակ սահմանված չէ:

2. Սույն հոդվածով սահմանված պահանջները չպահպանելը խոշոր գործարք կնքելիս չի հանգեցնում գործարքի անվավերության, եթե Ընկերության հետ գործարք կնքած անձը գործել է բարեխիղճ՝ չզիտեր կամ չէր կարող իմանալ նշված պահանջներն Ընկերության կողմից չպահպանվելու մասին:

Նշված իրավակարգավորումներից բխում է, որ խնդրում նկարագրված գործարքը խոշոր գործարք չէ «Արթսեմինդասթրիս» ՍՊԸ-ի համար, քանի որ ընկերությունը տվյալ գործարքի կողմ չէ: Միաժամանակ, հիշյալ գործարքը խոշոր գործարք չէ նաև «Իքս» ՓԲԸ-ի համար, սակայն դա սույն խնդրի համար էական նշանակություն չունի, քանի որ բաժնեմասերը վաճառելու մասին գործարքը կնքվել է «Իքս» ՓԲԸ-ի ընդհանուր ժողովի միաձայն որոշմամբ:

Միաժամանակ, հիշյալ գործարքը հանդիսանում է շահագրգռվածությամբ գործարք «Արթսեմինդասթրիս» ՍՊԸ-ի համար, քանի որ «Իքս» ՓԲԸ-ն հանդիսանում է իր բաժնեմասնակցությունն օտարելու վերաբերյալ գործարքի կողմ և տիրապետում է Ընկերության մասնակիցների ընդհանուր ձայների թվի քսան և ավելի տոկոսին:

Այսպիսով, «Իքս» ՓԲԸ-ի բաժնեմասերի վաճառքի գործընթացում խախտվել են նախապատվության իրավունքը և շահագրգռվածությամբ գործարքները կնքելու վերաբերյալ «Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների մասին» ՀՀ օրենքի դրույթները:

**Խնդիրների լուծման համար կիրառման ենթակա իրավական ակտերի համապատասխան հոդվածների հղումները.**

**ՀՀ քաղաքացիական օրենսգիրք**

**Գ Լ ՈՒ Խ 21**

**ՀԱՅՅԱՅԻՆ ՎԱՂԵՄՈՒԹՅՈՒՆ**

**Հոդված 331. Հայցային վաղեմություն հասկացությունը**

Հայցային վաղեմություն է համարվում իրավունքը խախտված անձի հայցով իրավունքի պաշտպանության ժամանակահատվածը:

**Հոդված 332. Հայցային վաղեմության ընդհանուր ժամկետ**

Հայցային վաղեմության ընդհանուր ժամկետը երեք տարի է:

**Հոդված 333. Հայցային վաղեմության հատուկ ժամկետներ**

1. Պահանջների որոշ տեսակների համար օրենքով կարող են սահմանվել հայցային վաղեմության ընդհանուր ժամկետի համեմատությամբ կրճատ կամ ավելի երկար հատուկ ժամկետներ:  
1<sup>1</sup>. Եթե անձի իրավունքի խախտումը նրա համար առաջացրել է վնաս, և խախտումը կապված է սույն օրենսգրքով սահմանված կարգով գործարքների կնքման կամ դրանց կատարման ընթացքում կոռուպցիոն գործողության հետ, ապա վնասի հատուցման պահանջներով հայցային վաղեմության

ժամկետը սահմանափակվում է 10 տարով՝ այն գործողության կատարման օրվանից հաշված, որն առաջացրել է վնաս:

2. Սույն օրենսգրքի 331, 334-343 հոդվածների կանոնները տարածվում են նաև հայցային վաղեմության հատուկ ժամկետների վրա, եթե այլ բան սահմանված չէ օրենքով:  
*(333-րդ հոդվածը լրաց. 20.05.05 ՀՕ-123-Ն)*

### **Հոդված 335. Հայցային վաղեմությունը կիրառելը**

1. Իրավունքի պաշտպանության մասին պահանջը դատարանը քննության է ընդունում հայցային վաղեմության ժամկետը լրանալուց անկախ:

2. Դատարանը հայցային վաղեմությունը կիրառում է միայն վիճող կողմի դիմումով:

Հայցային վաղեմության ժամկետի լրանալը, որի կիրառման մասին օրենքով սահմանված կարգով դիմում է վիճող կողմը, հիմք է դատարանի կողմից հայցը մերժելու մասին օրենքով սահմանված կարգով վճիռ կայացնելու համար:

*(335-րդ հոդվածը լրաց. 09.02.18 ՀՕ-112-Ն, խմբ. 11.05.20 ՀՕ-274-Ն)*

### **Հոդված 337. Հայցային վաղեմության ժամկետի հաշվարկը**

1. Հայցային վաղեմության ժամկետի ընթացքն սկսվում է այն օրվանից, երբ անձն իմացել է կամ պետք է իմացած լիներ իր իրավունքի խախտման մասին: Այդ կանոնից բացառությունները սահմանվում են սույն օրենսգրքով և այլ օրենքներով:

2. Այն պարտավորությունների համար, որոնք կատարելու համար որոշված է որոշակի ժամկետ, հայցային վաղեմության ընթացքն սկսվում է այդ ժամկետի ավարտմամբ:

3. Այն պարտավորությունների համար, որոնց կատարման ժամկետը որոշված չէ կամ որոշված է ցպահանջ, հայցային վաղեմության ընթացքն սկսվում է այն պահից, երբ պարտատիրոջ մոտ առաջանում է պարտավորության կատարում պահանջելու իրավունք, իսկ եթե պարտապանին արտոնյալ ժամկետ է տրամադրվել պահանջը կատարելու համար, հայցային վաղեմության հաշվարկն սկսվում է այդ ժամկետի ավարտից հետո:

4. Հետադարձ պարտավորությունների համար հայցային վաղեմության ընթացքն սկսվում է հիմնական պարտավորությունը կատարելու պահից:

### **Հոդված 338. Հայցային վաղեմության ժամկետը պարտավորության մեջ անձանց փոփոխվելու դեպքում**

Պարտավորության մեջ անձանց փոփոխվելը չի հանգեցնում հայցային վաղեմության ժամկետի և դրա հաշվարկման կարգի փոփոխման:

## **§ 4. ԵՐԱՇԽԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ**

### **Հոդված 375. Երաշխավորության պայմանագիր**

1. Երաշխավորը, երաշխավորության պայմանագրով, այլ անձի պարտատիրոջ առջև պարտավորվում է պատասխանատվություն կրել այդ անձի կողմից իր պարտավորությունը լրիվ կամ մասնակի կատարելու համար:

2. Երաշխավորության պայմանագիրը կարող է կնքվել նաև ապագայում ծագելիք պարտավորության ապահովման համար:

**ԱՆՁԱՆՑ ՓՈՓՈԽՎԵԼԸ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ**

**§ 1. ՊԱՐՏԱՏԻՐՈՋ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ԱՅԼ ԱՆՁԻ ԱՆՑՆԵԼԸ**

**Հոդված 397. Պարտատիրոջ իրավունքներն այլ անձի անցնելու հիմքերը և կարգը**

1. Պարտատիրոջը պարտավորության հիման վրա պատկանող իրավունքը (պահանջը) կարող է նրա կողմից այլ անձի փոխանցվել գործարքով (պահանջի զիջում) կամ անցնել այլ անձի՝ օրենքի հիման վրա:

Պարտատիրոջ իրավունքներն այլ անձի անցնելու մասին կանոնները չեն կիրառվում հետադարձ պահանջների նկատմամբ:

2. Պարտատիրոջ իրավունքներն այլ անձի անցնելու համար պարտապանի համաձայնությունը չի պահանջվում, եթե այլ բան նախատեսված չէ օրենքով կամ պայմանագրով:

3. Եթե պարտապանը գրավոր չի տեղեկացվել պարտատիրոջ իրավունքներն այլ անձի անցնելու մասին, ապա նոր պարտատերը կրում է իր համար դրանից բխող անբարենպաստ հետևանքների ռիսկը: Այդ դեպքում պարտավորության կատարումն սկզբնական պարտատիրոջը համարվում է կատարված պատշաճ պարտատիրոջը:

*(397-րդ հոդվածը խմբ. 08.03.00 ՀՕ-38)*

**Հոդված 398. Իրավունքներ, որոնք չեն կարող անցնել այլ անձանց**

Պարտատիրոջ անձի հետ անխզելիորեն կապված իրավունքների՝ ներառյալ այլմենտի և կյանքին կամ առողջությանը պատճառված վնասների հատուցման պահանջների, անցնելն այլ անձի չի թույլատրվում:

**Հոդված 399. Պարտատիրոջ՝ այլ անձի անցնող իրավունքների ծավալը**

Սկզբնական պարտատիրոջ իրավունքը նոր պարտատիրոջն է անցնում իրավունքի անցման պահին գոյություն ունեցող ծավալով և պայմաններով, եթե այլ բան նախատեսված չէ օրենքով կամ պայմանագրով: Մասնավորապես, նոր պարտատիրոջն են անցնում պարտավորության կատարումն ապահովող, ինչպես նաև պահանջի հետ կապված այլ իրավունքները՝ ներառյալ չվճարված տոկոսների նկատմամբ իրավունքը:

**Հոդված 400. Նոր պարտատիրոջ իրավունքների ապացույցները**

1. Պարտապանն իրավունք ունի չկատարել պարտավորությունը նոր պարտատիրոջ օգտին, մինչև պահանջն այդ անձին անցնելու վերաբերյալ նրան ապացույցներ ներկայացնելը:

2. Պահանջն այլ անձի զիջած պարտատերը պարտավոր է նոր պարտատիրոջը հանձնել պահանջի իրավունքը հավաստող փաստաթղթեր և հաղորդել պահանջի իրականացման համար նշանակություն ունեցող տեղեկություններ:

**Հոդված 401. Պարտապանի առարկություններն ընդդեմ նոր պարտատիրոջ պահանջի**

Պարտապանն իրավունք ունի նոր պարտատիրոջ պահանջի դեմ ներկայացնել առարկություններ, որոնք նա ունեցել է սկզբնական պարտատիրոջ դեմ՝ նոր պարտատիրոջը իրավունքների անցման մասին ծանուցում ստանալու պահին:

**Հոդված 402. Պարտատիրոջ իրավունքներն այլ անձի անցնելն օրենքի հիման վրա**

Օրենքի հիման վրա և դրանում նշված հանգամանքների ի հայտ գալով, պարտատիրոջ իրավունքներն այլ անձի են անցնում՝

- 1) պարտատիրոջ իրավունքների համընդհանուր իրավահաջորդության հետևանքով.
- 2) պարտատիրոջ իրավունքներն այլ անձի փոխանցելու մասին դատարանի վճռով, եթե օրենքով նախատեսված է նման փոխանցման հնարավորություն.
- 3) պարտապանի երաշխավորի կամ այդ պարտավորությամբ պարտապան չհանդիսացող գրավատուի կողմից պարտապանի պարտավորության կատարման հետևանքով.
- 4) ապահովագրական դեպքը վրա հասնելիս պատասխանատու պարտապանի նկատմամբ պարտատիրոջ իրավունքներն ապահովագրական հատուցում վճարած ապահովագրողին անցնելիս.
- 5) օրենքով նախատեսված այլ դեպքերում:

**Հոդված 403. Պահանջը զիջելու պայմանները**

1. Պարտատիրոջ պահանջի զիջումն այլ անձի թույլատրվում է, եթե դա չի հակասում օրենքին, այլ իրավական ակտերին կամ պայմանագրին:
2. Առանց պարտապանի համաձայնության պահանջի զիջումն այն պարտավորությամբ, որում պարտատիրոջ անձն էական նշանակություն ունի պարտապանի համար, չի թույլատրվում, բացառությամբ «Ապահովված հիփոթեքային պարտատոմսերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով, «Ակտիվների արժեթղթավորման և ակտիվներով ապահովված արժեթղթերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված դեպքերի:  
*(403-րդ հոդվածը լրաց. 26.05.08 ՀՕ-107-Ն)*

**Հոդված 404. Պահանջը զիջելու ձևը**

1. Հասարակ գրավոր կամ նոտարական ձևով կնքված գործարքի վրա հիմնված պահանջը պետք է զիջվի նույն ձևով:
2. Այն գործարքով, որից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման, պահանջի զիջումը պետք է գրանցվի այդ իրավունքների գրանցման համար սահմանված կարգով, եթե այլ բան նախատեսված չէ օրենքով:
3. Օրդերային արժեթղթով պահանջի զիջումը կատարվում է այդ արժեթղթի վրա փոխանցագիր կատարելու միջոցով (149 հոդվածի 3-րդ կետ):

**Հոդված 405. Պահանջը զիջած պարտատիրոջ պատասխանատվությունը**

Պահանջը զիջած սկզբնական պարտատերը նոր պարտատիրոջ առջև պատասխանատվություն է կրում նրան փոխանցված պահանջի անվավերության համար, սակայն պատասխանատվություն չի կրում պարտապանի կողմից այդ պահանջը չկատարելու համար, բացի այն դեպքից, երբ սկզբնական պարտատերը նոր պարտատիրոջ առջև երաշխավորություն է ստանձնել պարտապանի համար:

**Հոդված 411. Պատասխանատվությունը դրամական պարտավորությունը չկատարելու համար**

1. Ուրիշի դրամական միջոցներն ապօրինի պահելու, դրանք վերադարձնելուց խուսափելու, վճարման այլ կետանցով դրանք օգտագործելու, կամ այլ անձի հաշվին անհիմն ստանալու կամ խնայելու դեպքերում այդ գումարին վճարվում են տոկոսներ: Տոկոսները հաշվարկվում են կետանցի օրվանից մինչև պարտավորության դադարման օրը՝ ըստ համապատասխան ժամանակահատվածների համար Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի սահմանած բանկային տոկոսի հաշվարկային դրույքների:

*(պարբերությունը հանվել է 31.03.03 ՀՕ-521-Ն)*

Սույն կետով նախատեսված կարգը գործում է, եթե վնասի հատուցման կամ տոկոսի այլ չափ նախատեսված չէ օրենքով կամ պայմանագրով: Պայմանագրով նախատեսված տոկոսի չափը չի կարող գերազանցել Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի սահմանած՝ բանկային տոկոսի հաշվարկային դրույքի կրկնապատիկը: Եթե օրենքով կամ պայմանագրով վնասի հատուցման կամ տոկոսի այլ չափ նախատեսված է որոշակի ժամանակահատվածի համար, ապա սույն կետով նախատեսված կարգը չի գործում միայն տվյալ ժամանակահատվածում:

Սույն կետով նախատեսված տոկոսները չեն հաշվարկվում սույն օրենսգրքի 369-րդ հոդվածով հաշվարկված տուժանքի, 410-րդ հոդվածով հաշվարկված վնասների և տուժանքի և սույն հոդվածի 3-րդ կետով հաշվարկված տոկոսների նկատմամբ, եթե օրենքով այլ բան նախատեսված չէ:

2. Բանկային տոկոսի հաշվարկային դրույքը սահմանում է Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկը Հայաստանի Հանրապետության դրամի և օտարերկրյա այն արժույթների համար, որոնցով Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկը Հայաստանի Հանրապետությունում կատարում է գործառնություններ:

3. Եթե պարտատիրոջ դրամական միջոցների անօրինաչափ օգտագործմամբ նրան պատճառված վնասները գերազանցում են սույն հոդվածի 1-ին կետի հիման վրա նրան հասանելիք տոկոսների գումարը, նա իրավունք ունի պարտապանից պահանջել հատուցելու վնասները:

4. Ուրիշի միջոցներից օգտվելու համար տոկոսները գանձվում են մինչև այդ միջոցների գումարը պարտատիրոջը վճարելու օրը, եթե տոկոսների հաշվեգրման ավելի կարճ ժամկետ սահմանված չէ պայմանագրով:

## Գ Լ ՈՒ Խ 27

### *ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԴԱԴԱՐԵԼԸ*

#### **Հոդված 426. Պարտավորության դադարելը հաշվանցով**

Պարտավորությունը լրիվ կամ մասնակի դադարում է միատեսակ հանդիպական այն պահանջի հաշվանցով, որի ժամկետը լրացել է կամ նշված չէ, կամ որոշված է պահանջի պահով: Հաշվանցի համար բավական է մեկ կողմի հայտարարությունը:

#### **Հոդված 427. Հաշվանցի անթույլատրելիության դեպքերը**

Պահանջների հաշվանց չի թույլատրվում, եթե՝

- 1) մյուս կողմի դիմումով պահանջի նկատմամբ ենթակա է կիրառման հայցային վաղեմության ժամկետ և այդ ժամկետը լրացել է.
- 2) դրանք վերաբերում են կյանքին կամ առողջությանը պատճառված վնասների հատուցմանը.
- 3) դրանք վերաբերում են ավիմենտի բռնագանձմանը:

Պահանջների հաշվանց չի թույլատրվում նաև օրենքով կամ պայմանագրով նախատեսված այլ դեպքերում:

#### **Հոդված 428. Հաշվանցը պահանջը զիջելիս**

1. Պահանջի զիջման դեպքում պարտապանն իրավունք ունի նոր պարտատիրոջ պահանջի դեմ հաշվանցել սկզբնական պարտատիրոջ նկատմամբ իր հանդիպական պահանջը:
2. Հաշվանցը կատարվում է, եթե պահանջը ծագել է պարտապանի կողմից պահանջի զիջման մասին ծանուցում ստանալու պահին գոյություն ունեցող հիմքով, և պահանջի ժամկետը լրացել է մինչև պահանջի զիջման մասին նրա կողմից ծանուցում ստանալը, կամ եթե այդ ժամկետը նշված չէ կամ որոշված է պահանջի պահով:

## Գ Լ ՈՒ Խ 46

### ՓՈՒՍԱՌՈՒԹՅՈՒՆ

#### **Հոդված 877. Փոխառության պայմանագիր**

1. Փոխառության պայմանագրով մեկ կողմը (փոխատուն) մյուս կողմի (փոխառուի) սեփականությանն է հանձնում դրամ կամ տեսակային հատկանիշով որոշվող այլ գույք, իսկ փոխառուն պարտավորվում է փոխատուին վերադարձնել միննույն գումարի դրամ (փոխառության գումարը) կամ փոխատուից ստացված գույքին հավասար քանակի և նույն տեսակի ու որակի գույք: Փոխառության պայմանագիրը կնքված է համարվում դրամ կամ այլ գույք հանձնելու պահից:
2. Օտարերկրյա արժույթը և արժույթային արժեքները Հայաստանի Հանրապետության տարածքում կարող են փոխառության պայմանագրի առարկա լինել սույն օրենսգրքի 142, 143 և 356 հոդվածների կանոնների պահպանմամբ:

#### **Հոդված 878. Փոխառության պայմանագրի ձևը**

1. Փոխառության պայմանագիրը կնքվում է գրավոր:
2. Ի հավաստումն փոխառության պայմանագրի և դրա պայմանների՝ կարող է ներկայացվել փոխառուի տված ստացականը կամ փոխատուի կողմից փոխառուին որոշակի դրամական գումար կամ որոշակի քանակի գույք տալը հավաստող այլ փաստաթուղթ:
3. Գրավոր ձևը չպահպանելը հանգեցնում է փոխառության պայմանագրի անվավերության: Նման պայմանագիրն առչինչ է:

#### **Հոդված 879. Փոխառության պայմանագրի տոկոսները**

1. Փոխատուն իրավունք ունի փոխառության գումարից տոկոսներ ստանալ փոխառուից, եթե այլ բան նախատեսված չէ փոխառության պայմանագրով: Փոխառության պայմանագրում հստակ պետք է սահմանվեն տոկոսների չափը և հաշվարկման կարգը: Փոխառության պայմանագրի կնքման պահին տոկոսների չափը չի կարող գերազանցել Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի սահմանած բանկային տոկոսի հաշվարկային դրույքի կրկնապատիկը:
2. Տոկոսները վճարվում են յուրաքանչյուր ամիս, եթե այլ բան նախատեսված չէ փոխառության պայմանագրով:
3. Փոխառության պայմանագիրը ենթադրվում է անտոկոս՝ դրանում ուղղակիորեն այլ բան նախատեսված չլինելու դեպքում, եթե՝
  - 1) քաղաքացիների միջև փոխառության պայմանագիրը կնքված է նվազագույն աշխատավարձի հիսնապատիկը չգերազանցող գումարով և այն կապված չէ կողմերից որևէ մեկի ձեռնարկատիրական գործունեության հետ.
  - 2) փոխառուին պայմանագրով հանձնվել է ոչ թե դրամ, այլ տեսակային հատկանիշներով որոշվող այլ գույք:

(879-րդ հոդվածը խմբ. 20.03.06 ՀՕ-41-Ն)

#### **Հոդված 880. Փոխառուի՝ փոխառության գումարը վերադարձնելու պարտականությունը**

1. Փոխառուն պարտավոր է, փոխառության պայմանագրով նախատեսված ժամկետում և կարգով, փոխատուին վերադարձնել ստացված փոխառության գումարը:  
Այն դեպքում, երբ վերադարձնելու ժամկետը պայմանագրով որոշված չէ կամ որոշված է ցպահանջ, փոխառության գումարը փոխառուն պետք է վերադարձնի այդ մասին փոխատուի պահանջը ներկայացնելու օրվանից երեսնօրյա ժամկետում, եթե այլ բան նախատեսված չէ պայմանագրով:
2. Անտոկոս փոխառության գումարը փոխառուն կարող է վերադարձնել վաղաժամկետ:  
Տոկոսներով տրամադրված փոխառության գումարը կարող է վաղաժամկետ հետ վերադարձվել միայն փոխատուի համաձայնությամբ, եթե այլ բան նախատեսված չէ օրենքով կամ փոխառության պայմանագրով:
3. Փոխառության գումարը համարվում է վերադարձված այն փոխատուին հանձնելու կամ նրա բանկային հաշվին փոխանցելու պահին, եթե այլ բան նախատեսված չէ փոխառության պայմանագրով:

*(880-րդ հոդվածը լրաց. 17.06.08 ՀՕ-126-Ն)*

**Հոդված 881. Փոխատուի կողմից փոխառության պայմանագիրը խախտելու հետևանքները**

1. Եթե փոխառուն սահմանված ժամկետում չի վերադարձնում փոխառության գումարը, ապա փոխառության պայմանագրով նախատեսված տոկոսները դադարում են, իսկ այդ գումարին ենթակա են վճարման միայն սույն օրենսգրքի 411 հոդվածի 1-ին կետով նախատեսված չափով տոկոսներ, սկսած այն օրվանից, երբ գումարը պետք է վերադարձվեր մինչև գումարը փոխատուին վերադարձնելու օրը:  
Փոխառության պայմանագրում այլ պայմաններով տոկոսներ վճարելու վերաբերյալ համաձայնությունն առաջինն է:
2. Եթե փոխառության պայմանագրով նախատեսված է փոխառությունը վերադարձնել մաս առ մաս (տարաժամկետ), ապա փոխատուի կողմից փոխառության հերթական մասը վերադարձնելու համար որոշված ժամկետը խախտելու դեպքում փոխատուն իրավունք ունի պահանջել վերադարձնելու փոխառության մնացած ամբողջ գումարը՝ հասանելիք տոկոսների հետ միասին:

**ՀՀ աշխատանքային օրենսգիրք**

**Հոդված 14. Աշխատանքային հարաբերությունների ծագման հիմքերը**

1. Աշխատողի և գործատուի միջև աշխատանքային հարաբերությունները ծագում են աշխատանքային օրենսդրությամբ սահմանված կարգով կնքված գրավոր աշխատանքային պայմանագրով կամ աշխատանքի ընդունման մասին անհատական իրավական ակտով:
2. Աշխատանքի ընդունման մասին անհատական իրավական ակտով ծագած աշխատանքային հարաբերությունների կարգավորման վրա տարածվում են պայմանագրային հարաբերությունների կարգավորման սույն օրենսգրքի դրույթները:

**ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԼՈՒԾՈՒՄԸ**

**Հոդված 109. Աշխատանքային պայմանագրի լուծման հիմքերը**

1. Աշխատանքային պայմանագիրը լուծվում է՝
  - 1) կողմերի համաձայնությամբ.
  - 2) պայմանագրի գործողության ժամկետը լրանալու դեպքում.
  - 3) աշխատողի նախաձեռնությամբ.
  - 4) գործատուի նախաձեռնությամբ.
  - 5) աշխատողի պարտադիր ժամկետային զինվորական ծառայության գորակոչվելու դեպքում.

- 6) դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած դատավճռի առկայության դեպքում, որին համապատասխան՝ աշխատողը ենթարկվել է այնպիսի պատասխանատվության, որը հնարավորություն չի տալիս շարունակելու աշխատանքը.
  - 7) եթե օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատողը գրկվել է որոշակի աշխատանքներ կատարելու իրավունքներից.
  - 8) եթե աշխատողը մինչև տասնվեց տարեկան է, և ծնողներից մեկը, որդեգրողը կամ հոգաբարձուն կամ խնամակալը, նրա առողջության նկատմամբ հսկողություն իրականացնող բժիշկը կամ տեսչական մարմինը պահանջում է աշխատանքային պայմանագրի լուծում.
  - 9) աշխատանքի էական պայմանները փոփոխվելու դեպքում.
  - 10) ֆիզիկական անձ գործատուի մահվան դեպքում.
  - 11) աշխատողի մահվան դեպքում.
  - 12) աշխատանքի ընդունվելիս սույն օրենսգրքի 89-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ և (կամ) 4-րդ կետերի համաձայն՝ աշխատողի ներկայացրած տեղեկատվությունը կեղծ լինելու դեպքում.
  - 12.1) աշխատողի և գործատուի համաձայնությամբ սահմանված փորձաշրջանի արդյունքներով.
  - 13) աշխատանքի ընդունվելիս որոշակի աշխատանքներ կատարելու իրավունքներից գրկված լինելու փաստը աշխատողի թաքցնելու դեպքում:
2. Սույն հոդվածով նախատեսված դեպքերում աշխատանքային պայմանագրի լուծումը ձևակերպվում է գործատուի ընդունած անհատական իրավական ակտով, բացառությամբ սույն օրենսգրքի 128-րդ հոդվածով նախատեսված դեպքի:  
*(109-րդ հոդվածը խմբ. 24.06.10 ՀՕ-117-Ն, լրաց. 12.03.14 ՀՕ-5-Ն, փոփ. 17.12.14 ՀՕ-256-Ն, լրաց. 22.06.15 ՀՕ-96-Ն, փոփ. 21.03.18 ՀՕ-172-Ն, 04.12.19 ՀՕ-265-Ն)*  
*(22.06.15 [ՀՕ-96-Ն](#) օրենքն ունի անցումային դրույթ)*

**Հոդված 113. Աշխատանքային պայմանագրի լուծումը գործատուի նախաձեռնությամբ**

1. Գործատուն իրավունք ունի աշխատողի հետ լուծելու անորոշ ժամկետով կնքված աշխատանքային պայմանագիրը, ինչպես նաև որոշակի ժամկետով կնքված աշխատանքային պայմանագիրը նախքան դրա գործողության ժամկետի լրանալը՝
  - 1) կազմակերպության լուծարման (անհատ ձեռնարկատիրոջ գործունեության դադարման և օրենքով նախատեսված դեպքերում պետական գրանցումն ուժը կորցրած կամ անվավեր ճանաչվելու) դեպքում.
  - 2) արտադրության ծավալների և (կամ) տնտեսական և (կամ) տեխնոլոգիական և (կամ) աշխատանքի կազմակերպման պայմանների փոփոխման և (կամ) արտադրական անհրաժեշտությամբ պայմանավորված՝ աշխատողների քանակի և (կամ) հաստիքների կրճատման դեպքում.
  - 3) աշխատողի՝ զբաղեցրած պաշտոնին կամ կատարած աշխատանքին չհամապատասխանելու դեպքում.
  - 4) աշխատողին նախկին աշխատանքում վերականգնելու դեպքում.
  - 5) աշխատողի կողմից աշխատանքային պայմանագրով կամ ներքին կարգապահական կանոններով իրեն վերապահված պարտականությունները առանց հարգելի պատճառի պարբերաբար չկատարելու դեպքում.
  - 6) աշխատողի նկատմամբ վստահությունը կորցնելու դեպքում.
  - 7) աշխատողի երկարատև անաշխատունակության հետևանքով (եթե աշխատողը ժամանակավոր անաշխատունակության պատճառով աշխատանքի չի ներկայացել ավելի քան 120 օր անընդմեջ կամ վերջին տասներկու ամսվա ընթացքում՝ ավելի քան 140 օր, եթե օրենքով և այլ նորմատիվ իրավական ակտերով սահմանված չէ, որ որոշակի հիվանդությունների դեպքում աշխատատեղը և պաշտոնը պահպանվում են ավելի երկար ժամանակով).

- 8) աշխատողի կողմից ոգելից խմիչքների, թմրամիջոցների կամ հոգեներգործուն նյութերի ազդեցության տակ աշխատավայրում գտնվելու դեպքում.
- 9) անհարգելի պատճառով ամբողջ աշխատանքային օրվա (հերթափոխի) ընթացքում աշխատողի՝ աշխատանքի չներկայանալու դեպքում.
- 10) պարտադիր բժշկական զննությունից աշխատողի հրաժարվելու կամ խուսափելու դեպքում.
- 11) տարիքային կենսաթոշակի իրավունք ունեցող աշխատողի վաթսուներեք տարին, իսկ տարիքային կենսաթոշակի իրավունք չունեցող աշխատողի վաթսուհինգ տարին լրանալու դեպքում, եթե համապատասխան հիմքը նախատեսված է աշխատանքային պայմանագրով:
- 12)
2. Սույն հոդվածի 1-ին մասի 1-ին, 2-րդ, 3-րդ, 7-րդ և 11-րդ կետերով նախատեսված հիմքերով որոշակի ժամկետով կամ անորոշ ժամկետով կնքված աշխատանքային պայմանագիրը լուծելիս գործատուն պարտավոր է այդ մասին աշխատողին ծանուցել սույն օրենսգրքի 115-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված ժամկետներում:
3. Սույն հոդվածի 1-ին մասի 2-րդ, 3-րդ և 4-րդ կետերով նախատեսված հիմքերով աշխատանքային պայմանագիրը գործատուն կարող է լուծել, եթե իր մոտ առկա հնարավորությունների սահմաններում աշխատողին առաջարկել է նրա մասնագիտական պատրաստվածությանը, որակավորմանը, առողջական վիճակին համապատասխան այլ աշխատանք, իսկ աշխատողը հրաժարվել է առաջարկված աշխատանքից:
- Գործատուի մոտ համապատասխան հնարավորությունների բացակայության դեպքում պայմանագիրը լուծվում է առանց աշխատողին այլ աշխատանք առաջարկելու:
- (113-րդ հոդվածը խմբ. 24.06.10 ՀՕ-117-Ն, լրաց., խմբ., փոփ. 22.06.15 ՀՕ-96-Ն)  
(22.06.15 ՀՕ-96-Ն օրենքն ունի անցումային դրույթ)  
(հոդվածը 27.05.21 ՀՕ-270-Ն օրենքի փոփոխությամբ ուժի մեջ կմտնի 01.01.2022 թվականին)*

**Հոդված 114. Գործատուի նախաձեռնությամբ աշխատանքային պայմանագիրը լուծելու արգելքը**

1. Աշխատանքային պայմանագրի լուծումը գործատուի նախաձեռնությամբ արգելվում է՝
- 1) աշխատողի ժամանակավոր անաշխատունակության ժամանակահատվածում, բացառությամբ սույն օրենսգրքի 113-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետով նախատեսված դեպքերի.
- 2) աշխատողի արձակուրդում գտնվելու ժամանակահատվածում.
- 2.1) հղի կանանց հետ՝ հղիության մասին գործատուին տեղեկանք ներկայացնելու օրվանից մինչև հղիության և ծննդաբերության արձակուրդի ավարտման օրվանից հետո մեկ ամիսը լրանալը.
- 2.2) երեխային փաստացի խնամող՝ արձակուրդում չգտնվող անձի՝ մինչև մեկ տարեկան երեխա խնամելու ամբողջ ժամանակահատվածում, բացառությամբ սույն օրենսգրքի 113-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 5-րդ, 6-րդ, 8-րդ և 10-րդ կետերով նախատեսված դեպքերի.
- 3) գործադուլ հայտարարելու մասին որոշումն ընդունելուց հետո և գործադուլի ընթացքում, եթե աշխատողն այդ գործադուլին մասնակցում է սույն օրենսգրքով սահմանված կարգով.
- 4) պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինների կողմից աշխատողի վրա դրված պարտականությունների կատարման ժամանակահատվածում, բացառությամբ սույն օրենսգրքի 124-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված դեպքերի.
- 5) տարերային աղետների, տեխնոլոգիական վթարների, համաճարակների, դժբախտ պատահարների, հրդեհների և արտակարգ բնույթ կրող այլ դեպքերի կանխարգելման կամ դրանց հետևանքների անհապաղ վերացման ժամանակահատվածում, եթե, այդ դեպքերով պայմանավորված, աշխատողը չի ներկայացել աշխատանքի.
- 6) ուսումնական (այդ թվում՝ նախադպրոցական) հաստատությունների համար նախատեսված արձակուրդների չալանավորված տեղափոխման կամ չալանավորված տրամադրման ժամանակահատվածում, եթե մինչև տասներկու տարեկան երեխայի խնամքը կազմակերպելու նպատակով աշխատողը չի ներկայացել աշխատանքի:

2. Եթե աշխատողը սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված ժամանակահատվածների ավարտից հետո չի ներկայանում աշխատանքի, ապա գործատուն սույն գլխով նախատեսված հիմքերով կարող է լուծել աշխատանքային պայմանագիրը:
3. Կազմակերպության լուծարման (անհատ ձեռնարկատիրոջ գործունեության դադարման) հետևանքով աշխատանքային պայմանագիրը լուծելիս չեն կիրառվում սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված սահմանափակումները:
4. Աշխատանքային պայմանագրի լուծման օրինական պատճառ չի կարող համարվել՝
  - 1) արհեստակցական միությանը անդամակցելը կամ ոչ աշխատանքային ժամերին, իսկ գործատուի համաձայնությամբ նաև աշխատանքային ժամերին արհեստակցական միության գործունեությանը մասնակցելը.
  - 2) երբևէ աշխատողների ներկայացուցիչ հանդիսանալը.
  - 3) օրենքների, այլ նորմատիվ իրավական ակտերի կամ կոլեկտիվ պայմանագրի խախտման համար գործատուին պահանջներ ներկայացնելը.
  - 4) սեռը, ռասան, ազգությունը, լեզուն, ծագումը, քաղաքացիությունը, սոցիալական դրությունը, դավանանքը, ամուսնական վիճակը և ընտանեկան դրությունը, համոզմունքները կամ տեսակետները, կուսակցություններին կամ հասարակական կազմակերպություններին անդամակցելը.
  - 5) տարիքը, բացառությամբ օրենքով սահմանված դեպքերի:  
*(114-րդ հոդվածը լրաց., փոփ., խմբ. 24.06.10 ՀՕ-117-Ն, խմբ. 22.06.15 ՀՕ-96-Ն, լրաց. 29.04.20 ՀՕ-236-Ն, փոփ. 16.09.20 ՀՕ-415-Ն)*  
*(22.06.15 ՀՕ-96-Ն օրենքն ունի անցումային դրույթ)*

**Հոդված 122. Աշխատանքային պայմանագրի լուծումն աշխատողի նկատմամբ վստահությունը կորցնելու պատճառով**

Գործատուն իրավունք ունի սույն օրենսգրքի 113-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքով լուծելու աշխատանքային պայմանագիրը վստահությունը կորցրած աշխատողի հետ, եթե աշխատողը՝

- 1) դրամական կամ ապրանքային արժեքներ սպասարկելիս կատարել է այնպիսի արարքներ, որի հետևանքով գործատուն կրել է նյութական վնաս.
- 2) ուսումնադաստիարակչական գործառույթներ իրականացնող աշխատողը թույլ է տվել տվյալ աշխատանքը շարունակելու հետ անհամատեղելի արարք.
- 3) հրապարակել է պետական, ծառայողական, առևտրային կամ տեխնոլոգիական գաղտնիքներ կամ դրանց մասին հայտնել է մրցակից կազմակերպությանը:  
*(122-րդ հոդվածը խմբ. 24.06.10 ՀՕ-117-Ն)*

**Հոդված 123. Գործատուի նախաձեռնությամբ աշխատանքային պայմանագրի լուծումը առանց աշխատողին ծանուցելու**

Սույն օրենսգրքի 113-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ, 6-րդ, 8-10-րդ կետերով նախատեսված դեպքերում գործատուն իրավունք ունի աշխատանքային պայմանագիրը լուծելու՝ առանց աշխատողին ծանուցելու:

*(123-րդ հոդվածը խմբ. 24.06.10 ՀՕ-117-Ն)*

Գ Լ ՈՒ Խ 21

*ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԿԱՐԳԱՊԱՀՈՒԹՅՈՒՆԸ*

**Հոդված 215. Աշխատանքային կարգապահության ապահովումը**

1. Աշխատանքի վայրում աշխատանքային կարգապահությունն ապահովվում է արտադրողական աշխատանքի համար կազմակերպչական և տնտեսական նորմալ պայմաններ ստեղծելու, ինչպես նաև արդյունավետ աշխատանքը խրախուսելու միջոցով:

2. Աշխատանքային կարգապահությունը խախտող աշխատողների նկատմամբ կարող են կիրառվել կարգապահական ներգործության միջոցներ:

**Հոդված 216. Աշխատողի պարտականությունները**

Աշխատողը պարտավոր է բարեխղճորեն կատարել աշխատանքային պայմանագրով ստանձնած պարտավորությունները, պահպանել կազմակերպության ներքին կարգապահական կանոնները, աշխատանքային կարգապահությունը, կատարել աշխատանքի սահմանված նորմաները, պահպանել աշխատանքի պաշտպանության և անվտանգության ապահովման պահանջները, բարեխղճորեն վերաբերվել գործատուի և այլ աշխատողների գույքին, ինչպես նաև մարդկանց կյանքին ու առողջությանը, գործատուի գույքի պաշտպանությանն սպառնացող վտանգի ծագման մասին անմիջապես տեղեկացնել գործատուին:

**Հոդված 217. Գործատուի պարտականությունները**

Գործատուն պարտավոր է՝

1) աշխատողին ապահովել պայմանագրով պայմանավորված աշխատանքով և կազմակերպել նրա աշխատանքը.

2) նախատեսված ժամկետում և սահմանված չափով վճարել աշխատողի աշխատավարձը.

3) սահմանված կարգով աշխատողին տրամադրել վճարվող և չվճարվող արձակուրդը.

4) ապահովել անվտանգ և առողջության համար անվնաս աշխատանքային պայմաններ.

5) աշխատանքի ընդունելու ժամանակ, ինչպես նաև աշխատելու ընթացքում աշխատողին ծանոթացնել կազմակերպության ներքին կարգապահական կանոններին, աշխատանքի պաշտպանության և հակահրդեհային անվտանգության ապահովման պահանջներին.

6) կատարել օրենքով, այլ իրավական ակտերով, կոլեկտիվ և աշխատանքային պայմանագրերով նախատեսված այլ պարտականություններ:

*(217-րդ հոդվածը լրաց. 22.06.15 ՀՕ-96-Ն)*

*(22.06.15 ՀՕ-96-Ն օրենքն ունի անցումային դրույթ)*

**Հոդված 218. Աշխատանքային կարգապահությունը և կազմակերպության ներքին կարգապահական կանոնները**

1. Աշխատանքային կարգապահությունն աշխատանքային օրենսդրությամբ, աշխատանքային իրավունքի նորմեր պարունակող այլ նորմատիվ իրավական ակտերով, կոլեկտիվ և աշխատանքային պայմանագրերով, գործատուի ներքին իրավական ակտերով սահմանված վարքագծի կանոններն են, որոնց պարտավոր են ենթարկվել բոլոր աշխատողները:

2. Կազմակերպության ներքին կարգապահական կանոնները (գործատուի ներքին իրավական ակտը) կանոնակարգում են աշխատողների՝ աշխատանքի ընդունման և ազատման կարգը, աշխատանքային պայմանագրի կողմերի հիմնական իրավունքները, պարտականությունները և պատասխանատվությունը, աշխատանքի ռեժիմը, հանգստի ժամանակը, աշխատողների նկատմամբ կիրառվող խրախուսանքի և կարգապահական պատասխանատվության միջոցները, ինչպես նաև աշխատանքային հարաբերություններին վերաբերող այլ հարցեր:

**Հոդված 219. Գործատուի կողմից կիրառվող խրախուսանքները**

1. Աշխատանքային պարտականությունները բարեխիղճ կատարելու համար գործատուն կարող է խրախուսել աշխատողներին: Աշխատողի նկատմամբ կարող են կիրառվել խրախուսանքի հետևյալ տեսակները.

1) շնորհակալության հայտարարում.

2) միանվագ դրամական պարգևատրում.

3) հուշանվերով պարգևատրում.

4) լրացուցիչ վճարովի արձակուրդի տրամադրում.

5) կարգապահական տույժի հանում:

2. Կոլեկտիվ պայմանագրով կամ ներքին իրավական ակտերով, այդ թվում՝ աշխատակիցների բաժնետիրացման ծրագրերով, կարող են սահմանվել խրախուսանքի այլ տեսակներ:
3. Օրենքով նախատեսված դեպքերում և կարգով աշխատողները կարող են ներկայացվել պետական պարգևների:

*(219-րդ հոդվածը փոփ. 26.05.21 ՀՕ-237-Ն)*

**Հոդված 220. Աշխատանքային կարգապահության խախտումը**

1. Աշխատանքային կարգապահության խախտում է համարվում աշխատողի մեղքով աշխատանքային պարտականությունները չկատարելը կամ ոչ պատշաճ կատարելը:
2. Աշխատանքային կարգապահության խախտում չեն համարվում՝
  - 1) տարերային աղետների, տեխնոլոգիական վթարների, համաճարակների, դժբախտ պատահարների, հրդեհների և արտակարգ բնույթ կրող այլ դեպքերի կանխարգելման կամ դրանց հետևանքների անհապաղ վերացման ժամանակահատվածում այդ դեպքերով պայմանավորված աշխատողի աշխատանքի չներկայանալը կամ ոչ լրիվ աշխատանքային օրով աշխատանքի ներկայանալը.
  - 2) ուսումնական (այդ թվում՝ նախադպրոցական) հաստատությունների համար նախատեսված արձակուրդների չպլանավորված տեղափոխման կամ չպլանավորված տրամադրման ժամանակահատվածում մինչև տասներկու տարեկան երեխայի խնամքը կազմակերպելու նպատակով աշխատողի աշխատանքի չներկայանալը կամ ոչ լրիվ աշխատանքային օրով աշխատանքի ներկայանալը:

*(220-րդ հոդվածը խմբ. 29.04.20 ՀՕ-236-Ն)*

**Հոդված 221. Աշխատանքային կարգապահության կոպիտ խախտումը**

*(հոդվածն ուժը կորցրել է 24.06.10 ՀՕ-117-Ն)*

**Հոդված 222. Կարգապահական պատասխանատվության հիմքերը**

Կարգապահական պատասխանատվության կարող է ենթարկվել միայն աշխատանքային կարգապահությունը խախտած աշխատողը:

**Հոդված 223. Կարգապահական տույժերը**

1. Աշխատանքային կարգապահությունը խախտելու համար կարող են կիրառվել հետևյալ կարգապահական տույժերը.
  - 1) նկատողություն.
  - 2) խիստ նկատողություն.
  - 3) սույն օրենսգրքի 113-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ, 6-րդ, 8-10-րդ կետերի հիմքերով աշխատանքային պայմանագրի լուծում:
2. Առանձին կատեգորիայի աշխատողների համար օրենքով կարող են սահմանվել նաև կարգապահական այլ տույժեր:
3. Օրենքով չնախատեսված կարգապահական տույժերի կիրառումն արգելվում է:

*(223-րդ հոդվածը փոփ. 24.06.10 ՀՕ-117-Ն)*

**Հոդված 224. Կարգապահական տույժի ընտրությունը**

Կարգապահական տույժի կիրառման դեպքում պետք է հաշվի առնվեն խախտման ծանրությունը և դրա հետևանքները, աշխատողի մեղքը, այդ խախտման կատարման հանգամանքները և աշխատողի՝ նախկինում կատարած աշխատանքը:

**Հոդված 225. Աշխատանքային կարգապահության մեկ խախտման համար մի քանի կարգապահական տույժերի կիրառման արգելքը**

Աշխատանքային կարգապահության յուրաքանչյուր խախտման համար կարող է նշանակվել մեկ կարգապահական տույժ:

**Հոդված 226. Կարգապահական տույժի կիրառման կարգը**

1. Մինչև կարգապահական տույժի կիրառումը գործատուն պետք է աշխատողից գրավոր կերպով պահանջի խախտման մասին գրավոր բացատրություն՝ տրամադրելով ողջամիտ ժամկետ: Եթե գործատուի սահմանած ողջամիտ ժամկետում աշխատողն առանց հարգելի պատճառների չի ներկայացնում գրավոր բացատրություն, ապա կարգապահական տույժը կարող է կիրառվել առանց գրավոր բացատրության:

*(226-րդ հոդվածը խմբ. 24.10.18 ՀՕ-404-Ն, 23.01.20 ՀՕ-76-Ն)*

**Հոդված 227. Կարգապահական տույժի կիրառման ժամկետը**

1. Կարգապահական տույժը կարող է կիրառվել խախտումը հայտնաբերելուց հետո՝ մեկ ամսվա ընթացքում, չհաշված աշխատողի ժամանակավոր անաշխատունակության պատճառով բացակայության, գործուղման կամ արձակուրդի մեջ գտնվելու ժամանակահատվածները:

2. Կարգապահական տույժը չի կարող կիրառվել, եթե խախտումը կատարելու օրվանից անցել է վեց ամիս: Եթե խախտումը հայտնաբերվում է աուդիտի, ֆինանսատնտեսական գործունեության, գումարային կամ այլ արժեքների ստուգման (գույքագրման) ընթացքում, ապա կարգապահական տույժը կարող է կիրառվել, եթե խախտումը կատարելու օրվանից անցել է ոչ ավելի, քան մեկ տարի:

**«Մնանկության մասին» ՀՀ օրենք**

**Հոդված 3. Պարտապանին սնանկ ճանաչելու հիմքերն ու անվճարունակության հատկանիշները**

1. Պարտապանը կարող է սնանկ ճանաչվել դատարանի վճռով՝ սեփական նախաաձեռնությամբ (կամավոր սնանկության դիմում) կամ պարտատիրոջ պահանջով (հարկադրված սնանկության դիմում), եթե պարտապանն անվճարունակ է:

2. Պարտապանը՝ դատարանի վճռով կարող է սնանկ ճանաչվել՝

1) հարկադրված սնանկության դիմումի հիման վրա՝ եթե թույլ է տվել օրենքով սահմանված նվազագույն աշխատավարձի երկուհազարապատիկը գերազանցող անվիճելի վճարային պարտավորությունների 90-օրյա կամ ավելի ժամկետով կետանց, և վճռի կայացման պահին նշված կետանցը շարունակվում է (փաստացի անվճարունակություն): Վճարային պարտավորությունն անվիճելի է, եթե պարտապանը չի առարկում դրա դեմ, կամ եթե առարկում է հիշյալ պարտավորության դեմ, սակայն՝

ա) վճարային պարտավորությունը ճանաչված է օրինական ուժի մեջ մտած վճռով կամ դատավճռով, և բացակայում է հաշվանցի հնարավորությունը,

բ) պահանջը հիմնված է գրավոր գործարքի վրա, և պարտապանը չի ապացուցում, որ տվյալ պահանջի դեմ առարկելու բավարար հիմքեր ունի (ներառյալ՝ պահանջի հաշվանցը),

գ) պահանջը բխում է օրենքով սահմանված հարկեր, տուրքեր, այլ վճարներ վճարելու պարտապանի պարտավորությունից, և պարտապանը չի ապացուցում, որ տվյալ պահանջի դեմ առարկելու բավարար հիմքեր ունի (ներառյալ՝ պահանջի հաշվանցը),

դ) պահանջի չվիճարկվող մասը գերազանցում է օրենքով սահմանված նվազագույն աշխատավարձի երկուհազարապատիկը.

2) սեփական նախաաձեռնությամբ՝ (կամավոր սնանկության դիմում) եթե պարտապանի պարտավորություններն օրենքով սահմանված նվազագույն աշխատավարձի երկուհազարապատիկի և ավելի չափով գերազանցում են պարտապանի ակտիվների արժեքը՝ իրավաբանական անձի դեպքում՝ հաշվապահական հաշվառման կանոնների հիման վրա կատարված գնահատմամբ, ֆիզիկական անձի դեպքում՝ գնահատման ստանդարտների հիման վրա կատարված գնահատմամբ (հաշվեկշռային անվճարունակություն): Ակտիվների արժեքի մեջ չի ներառվում այն ակտիվների արժեքը, որոնց վրա օրենքի համաձայն բռնագանձում չի կարող տարածվել:

2.1) սեփական նախաձեռնությամբ (կամավոր սնանկության դիմում)՝ եթե պարտապանի հանրային իրավական դրամական պահանջներով կատարման ենթակա պարտավորությունները գերազանցում են պարտապանի ակտիվների արժեքը՝ իրավաբանական անձի դեպքում՝ հաշվապահական հաշվառման կանոնների հիման վրա կատարված գնահատմամբ, ֆիզիկական անձի կամ անհատ ձեռնարկատիրոջ դեպքում՝ գնահատման ստանդարտների հիման վրա կատարված գնահատմամբ (հաշվեկշռային անվճարունակություն): Ակտիվների արժեքի մեջ չի ներառվում այն ակտիվների արժեքը, որոնց վրա, օրենքի համաձայն, բռնագանձում չի կարող տարածվել:

*(մասն ուժը կորցրել է 22.12.10 ՀՕ-13-Ն)*

2.2. Պարտապանն իրավունք ունի դիմելու դատարան կանխատեսվող սնանկության դեպքում, երբ ակնհայտ է, որ առաջանալու են սույն հոդվածի 2-րդ մասի 2-րդ և 2.1-ին կետերով նախատեսված՝ պարտապանի սեփական սնանկությունը ճանաչելու հիմքերը:

4. Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքով նախատեսված ֆոնդի կառավարման պայմանագրի կողմ համարվող և այդ ֆոնդի միջոցների սեփականատեր չհամարվող ֆոնդի կառավարչի համար ֆոնդի կառավարման հետ կապված գործարքներով նրա ստանձնած պարտավորությունները սույն օրենքի իմաստով համարվում են պարտավորություն, եթե համաձայն Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի դրույթների՝ դրանք ենթակա են կատարման նրա հաշվին: Ընդ որում, այն պարտավորությունները, որոնք ենթակա են կատարման սույն մասով նախատեսված ֆոնդի կառավարչի հաշվին միայն ֆոնդի ակտիվների անբավարարության դեպքում, այդ կառավարչի համար սույն օրենքի իմաստով պարտավորություն են համարվում միայն ֆոնդի ակտիվների չբավարարող մասով:

5. Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքով նախատեսված ֆոնդի կառավարման պայմանագրի կողմ համարվող և այդ ֆոնդի միջոցների սեփականատեր համարվող ֆոնդի կառավարիչը համարվում է անվճարունակ նաև այն դեպքում, եթե իր կողմից կառավարվող ֆոնդի (ֆոնդերի) ակտիվների հաշվին կատարման ոչ ենթակա պարտավորությունները գերազանցում են ֆոնդի կառավարչի այն ակտիվների արժեքը, որոնք իր կողմից կառավարվող ֆոնդի ակտիվներ չեն:

*(3-րդ հոդվածը լրաց. 18.05.10 ՀՕ-67-Ն, փոփ., լրաց. 22.12.10 ՀՕ-256-Ն, խմբ., փոփ. 22.12.10 ՀՕ-13-Ն, լրաց. 17.12.14 ՀՕ-253-Ն, 17.06.16 ՀՕ-105-Ն, փոփ. 21.12.17 ՀՕ-298-Ն, 18.09.20 ՀՕ-445-Ն) (18.09.20 ՀՕ-445-Ն օրենքն ունի անցումային դրույթ)*

## **Հոդված 19. Պարտապանին սնանկ ճանաչելու կամ սնանկ ճանաչելու դիմումը մերժելու հետևանքները**

*(վերնագիրը փոփ. 22.12.10 ՀՕ-13-Ն)*

1. Պարտապանին սնանկ ճանաչելու մասին վճիռն օրինական ուժի մեջ մտնելուց հետո դատարանը՝ ա) սույն օրենքի 22-րդ հոդվածով սահմանված կարգով անհապաղ նշանակում է սնանկության գործով կառավարիչ (այսուհետ՝ կառավարիչ)՝ դադարեցնելով ժամանակավոր կառավարչի լիազորությունները: Ներդրումային ֆոնդի սնանկության վերաբերյալ գործով կառավարիչ չի նշանակվում, և կառավարչի՝ սույն օրենքով նախատեսված լիազորություններն իրականացնում է այդ ներդրումային ֆոնդի պահառուն՝ սույն օրենքով սահմանված կարգով և պայմաններով, եթե այլ կարգավորում չի նախատեսված կամ չի բխում «Ներդրումային ֆոնդերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքից.

բ) պահանջների վերջնական ցուցակը հաստատելու մասին որոշմամբ նշանակում է պարտատերերի առաջին ժողովի անցկացման ժամանակը և վայրը: Պարտատերերի առաջին ժողովը նշանակվում է պահանջների վերջնական ցուցակը հաստատելու մասին որոշումը կայացնելու օրվանից ոչ ուշ, քան 40 օրվա, և ոչ շուտ, քան 30 օրվա ընթացքում:

Պահանջների վերջնական ցուցակը հաստատելու մասին դատարանի որոշման բողոքարկումը չի կարող խոչընդոտ հանդիսանալ պարտատերերի առաջին ժողովի անցկացման համար, բացառությամբ եթե բողոքարկվում են որոշումներ հաստատված բոլոր պահանջները.

գ) պարտապանին սնանկ ճանաչելու, դիմումը մերժելու կամ դիմումն առանց քննության թողնելու, ինչպես նաև գործի վարույթը կարճելու մասին անհապաղ տեղեկացնում է՝

- պարտապանի պետական գրանցումն իրականացնող պետական մարմնին,
- անշարժ և պետական գրանցման ենթակա այլ գույքի (իրավունքների) պետական գրանցումն իրականացնող պետական մարմիններին,
- այն հարկային մարմիններին, որտեղ պարտապանը հաշվառված է,
- մաքսային պետական մարմիններին,
- կենտրոնական բանկին՝ Հայաստանի Հանրապետության բանկերին և այլ վարկային կազմակերպություններին և Հայաստանի կենտրոնական դեպոզիտարիային, Հայաստանի Հանրապետության տարածքում գործող վարկային բյուրոներին ծանուցելու համար,
- Հարկադիր կատարումն ապահովող ծառայությանը,
- Հայաստանի Հանրապետության վճարեկ դատարանին՝ Հայաստանի Հանրապետության բոլոր դատարաններին ծանուցելու համար,
- պարտապանին լիցենզիա կամ ընդերքօգտագործման իրավունք տրամադրած պետական մարմնին (մարմիններին), եթե դիմումում առկա է տեղեկատվություն լիցենզիա կամ ընդերքօգտագործման իրավունք ունենալու մասին.
- աշխատանքի և սոցիալական հարցերով լիազոր պետական մարմնին.
- Մրցակցության պաշտպանության հանձնաժողովին.
- Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազությանը:

Սույն կետով նախատեսված տեղեկացումն ուղարկվում է գրավոր, իսկ առկայության դեպքում՝ էլեկտրոնային փաստաթղթաշրջանառության համակարգի գործադրմամբ.

դ) կառավարչին պարտավորեցնում է ոչ ուշ, քան համապատասխան դատական ակտերի ուժի մեջ մտնելու պահից՝ 5 օրվա ընթացքում, պարտապանին սնանկ ճանաչելու, կառավարիչ և պարտատերերի առաջին ժողով նշանակելու մասին տեղեկությունները հրապարակել <http://www.azdarar.am> հասցեում գտնվող Հայաստանի Հանրապետության հրապարակային ծանուցումների պաշտոնական ինտերնետային կայքում և փակցնել դատարանի շենքում հատուկ հատկացված տեղում.

ե) սույն օրենքով նախատեսված դեպքերում՝ կառավարչի, պարտատերերի խորհրդի, պարտատիրոջ կամ պարտապանի միջնորդությամբ հրավիրում է դատական նիստ.

զ) պարտապանին պարտավորեցնում է 10 օրվա ընթացքում կառավարչին ներկայացնել սույն օրենքի 12-րդ հոդվածով սահմանված փաստաթղթերը, եթե դիմումը ներկայացրել է պարտատերը կամ պարտապանի կողմից դիմում ներկայացնելու դեպքում դրանք ներկայացվել են թերի.

է) պարտապանին լուծարելու մասին որոշում կայացնելու պահից անհապաղ որոշում է կայացնում պարտապանի գույքը տնօրինելու և կառավարելու իրավունքները կասեցնելու մասին.

ը) արգելանք է դնում պարտապանին պատկանող գույքի և դրամական միջոցների վրա, բացառությամբ «Վճարահաշվարկային համակարգերի և վճարահաշվարկային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված դեպքերի.

թ) *(կեսն ուժը կորցրել է 12.12.19 ՀՕ-294-Ն)*

ժ) պարտապանին գրավոր պարզաբանում է սույն օրենքով սահմանված հայտարարագիր ներկայացնելու պարտականության և դրա խախտման հետևանքների մասին՝ միաժամանակ պարզաբանումը հրապարակելով դատական իշխանության պաշտոնական կայքում:

1.1. Պարտապանին սնանկ ճանաչելու կամ սնանկության վտանգի դիմումը բավարարելու մասին վճիռ կայացնելու դեպքում նույն պարտապանին սնանկ ճանաչելու պահանջով այլ դիմումներով դատարանի վարույթում առկա գործերի վարույթը կարճվում է վճռի բողոքարկման ժամկետը լրանալուց, իսկ վճռի բողոքարկված լինելու դեպքում՝ օրինական ուժի մեջ մնալուց հետո՝ մեկշաբաթյա ժամկետում:

2. Պարտապանին սնանկ ճանաչելու մասին վճիռն օրինական ուժի մեջ մտնելու պահից պարտապանի մոտ ստուգում կամ ուսումնասիրություն կարող է իրականացվել միայն դատարանի որոշմամբ: Պարտապանի ֆինանսական առողջացման ծրագրի գործողության և լուծարման վարությամբ գտնվող պարտապանի գործունեության վերսկսման ժամանակահատվածում, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքով նախատեսված դեպքերում ստուգման կամ ուսումնասիրության իրականացման համար դատարանի որոշում չի պահանջվում:

Ստուգման կամ ուսումնասիրության իրականացումը թույլատրելու կամ մերժելու մասին որոշումը կարող է բողոքարկվել վերաքննության կարգով:

Պարտապանի լուծարման գործընթացը սկսվելուց հետո ստուգում կամ ուսումնասիրություն իրականացնելն արգելվում է, բացառությամբ միասնական հաշվին մուտքագրման ենթակա գումարների հիմնավորվածության և հանդիպակաց ուսումնասիրությունների:

3. Պարտապանին սնանկ ճանաչելու մասին վճիռն օրինական ուժի մեջ մտնելու պահից կասեցվում են պարտապանի կանոնադրական (բաժնեհավաք, փայտահավաք) կապիտալում մասնակցություն ունեցող անձանց՝ օրենքով և պարտապանի կանոնադրությամբ սահմանված գույքի կառավարման և տնօրինմանը վերաբերող այն լիազորությունները, որոնք պայմանավորված են այդ մասնակցությամբ՝ Նշված լիազորությունների իրականացումը կարող է թույլատրվել դատարանի որոշմամբ՝ ֆինանսական առողջացման ծրագրի շրջանակներում:

Պարտապանին սնանկ ճանաչելու մասին վճիռն օրինական ուժի մեջ մտնելու պահից պարտապանը (ղեկավարը) գործում է սույն օրենքի 47-րդ հոդվածի երկրորդ և երրորդ մասերով նախատեսված կարգով:

4. Սույն հոդվածի առաջին մասի «գ» կետով նախատեսված՝ պետական մարմինները պարտավոր են տասնհինգօրյա ժամկետում դատարան ներկայացնել պարտապանի գույքի (այդ թվում՝ իրավաբանական անձանց բաժնեհավաք, փայտահավաք կամ այլ կապիտալում մասնակցության), ինչպես նաև իրավունքների (այդ թվում՝ պարտապանի գրավառուի իրավունքների) գրանցման մասին, իսկ բանկերը և Հայաստանի կենտրոնական դեպոզիտարիան՝ պարտապանի՝ բանկային հաշիվների և դրանց մնացորդների, ինչպես նաև արժեթղթերի նկատմամբ ունեցած իրավունքների մասին տեղեկություններ:

5. Պարտապանին սնանկ ճանաչելու մասին վճիռն օրինական ուժի մեջ մտնելուց հետո յուրաքանչյուր պարտատեր կարող է ծանոթանալ սնանկության վարույթի նյութերին, ինչպես նաև կառավարչից պահանջելու տեղեկություններ պարտապանի գործունեության, ֆինանսական վիճակի, ներառյալ՝ գույքագրված ակտիվների և պարտավորությունների վերաբերյալ:

6. Պարտապանին սնանկ ճանաչելու դիմումը մերժելու կամ գործի վարույթը կարճելու մասին դատարանի օրինական ուժի մեջ մտած դատական ակտը հիմք է սույն օրենքի 13-րդ հոդվածի չորրորդ մասով նախատեսված սահմանափակումները և հինգերորդ մասով նախատեսված կասեցումները վերացնելու համար:

7. Սնանկության հիմքերի ակնհայտ չլինելու պատճառաբանությամբ դիմումի մերժումը չի արգելում նույն անձին նույն դիմումով նույն պարտապանի դեմ դիմել դատարան՝ սնանկության հիմքերի առկայությունն ակնհայտ դառնալու պայմաններում:

*(19-րդ հոդվածը փոփ. 05.02.09 ՀՕ-48-Ն, լրաց. 22.10.08 ՀՕ-191-Ն, փոփ., լրաց. 22.12.10 ՀՕ-256-Ն, 22.12.10 ՀՕ-13-Ն, փոփ. 19.03.12 ՀՕ-143-Ն, լրաց. 17.06.16 ՀՕ-105-Ն, փոփ. 21.12.17 ՀՕ-298-Ն, լրաց. 23.03.18 ՀՕ-252-Ն, փոփ., խմբ., լրաց. 12.12.19 ՀՕ-294-Ն, լրաց., փոփ. 16.07.20 ՀՕ-398-Ն, լրաց. 03.03.21 ՀՕ-89-Ն, փոփ. 03.03.21 ՀՕ-102-Ն)*

*(03.03.21 [ՀՕ-89-Ն](#) օրենքն ունի անցումային դրույթ)*

**Հոդված 40. Սորատորիումի ընթացքում որոշակի գործողությունների թույլատրումը**

1. Շահագրգիռ անձի դիմումով դատարանը որոշում է կայացնում մորատորիումի ընթացքում որոշակի գործողությունների կատարումը թույլատրելու վերաբերյալ, եթե՝

ա) առաջանում է համարժեք պաշտպանություն տալու անհրաժեշտություն.

բ) տվյալ գույքը վաճառքի (իրացման) ենթակա չէ:

2. Պարտատիրոջ կամ պարտապանի դիմումով դատարանը մորատորիումի ընթացքում թույլատրում է պարտապանի և պարտատիրոջ միատեսակ հանդիպական պարտավորությունների հաշվանցի կատարումը: Ֆինանսական գործարքներից և ապահովության պայմանագրերից բխող պարտավորությունների հաշվանցի առանձնահատկությունները սահմանվում են սույն օրենքի 40.1-ին հոդվածով:

3. Հաշվանց չի թույլատրվում, եթե՝

ա) պարտապանի նկատմամբ ունեցած պահանջը պարտատիրոջն է փոխանցվել այլ անձի կողմից՝ սնանկության դիմում ներկայացնելուն նախորդած 90 օրվա ընթացքում, և այդ ընթացքում պարտապանը անվճարունակ էր.

բ) պարտատերը պարտապանի նկատմամբ պարտավորությունն ստանձնել է սնանկության դիմում ներկայացնելուն նախորդած 90 օրվա ընթացքում՝ պարտապանի նկատմամբ իր ունեցած պահանջի հետ հաշվանց կատարելու նպատակով.

գ) հաշվանցի արդյունքում կխախտվի պահանջների բավարարման՝ օրենքով սահմանված հերթականությունը և համամասնությունը:

3.1. Մինչև պարտատերերի պահանջների վերջնական ցուցակի հաստատումը կառավարչի, պարտատիրոջ կամ պարտապանի դիմումով դատարանը կարող է թույլատրել պարտապանին ստանձնելու նոր ֆինանսական պարտավորություններ: Պարտատերերի պահանջների վերջնական ցուցակը հաստատելուց հետո դատարանը կարող է թույլատրել պարտապանին ստանձնելու նոր ֆինանսական պարտավորություններ պարտատիրոջ (պարտատերերի ժողովի) համաձայնությամբ:

4. Մորատորիումի ընթացքում որոշակի գործողությունների կատարումը թույլատրելու մասին դիմումն ստանալու հաջորդ օրը դատարանը դիմումի պատճենն ուղարկում է պարտապանին և կառավարչին՝ պարտատիրոջ կողմից դիմում ներկայացնելու դեպքում, իսկ եթե դիմումը ներկայացվել է պարտապանի (պարտատիրոջ հետ իր ունեցած փոխադարձ պարտավորությունների հաշվանցի կատարման նպատակով) կամ կառավարչի կողմից, ապա համապատասխանաբար պարտատիրոջը (պարտատերերին) և կառավարչին կամ պարտատիրոջն ու պարտապանին:

Եթե դիմումի պատճենն ստանալուն հաջորդող 7 օրվա ընթացքում պարտապանը (պարտատերը) գրավոր չի վիճարկում ներկայացված դիմումը, ապա դիմումի վիճարկման ժամկետի ավարտից հետո՝ եռօրյա ժամկետում, դատավորն առանց դատական նիստ հրավիրելու որոշում է կայացնում մորատորիումի ընթացքում որոշակի գործողությունների կատարումը թույլատրելու մասին:

Եթե դիմումի պատճենն ստանալուն հաջորդող 7 օրվա ընթացքում պարտապանը (պարտատերը) գրավոր առարկություն է ներկայացնում դատարան, ապա դատավորն առարկությունն ստանալուց հետո՝ երկշաբաթյա ժամկետում, նշանակում է դատական նիստ, որի ժամանակի և վայրի մասին կողմերը ծանուցվում են պատշաճ ձևով:

Առարկությունների քննարկման արդյունքում սույն օրը դատարանը որոշում է կայացնում մորատորիումի ընթացքում որոշակի գործողությունների կատարումը թույլատրելու կամ դիմումը մերժելու մասին:

*(40-րդ հոդվածը լրաց. 27.10.16 ՀՕ-192-Ն, լրաց., փոփ. 12.12.19 ՀՕ-294-Ն, փոփ. 03.03.21 ՀՕ-89-Ն) (03.03.21 ՀՕ-89-Ն օրենքն ունի անցումային դրույթ)*

**«Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների մասին» ՀՀ օրենք**

**Հոդված 14. Ընկերության կանոնադրական կապիտալում ընկերության մասնակցի բաժնեմասը փոխանցելը (օտարելը)**

1. Ընկերության մասնակիցն իրավունք ունի ընկերության կանոնադրական կապիտալում իր բաժնեմասը (դրա մասը) վաճառել կամ այլ ձևով օտարել տվյալ ընկերության մեկ կամ մի քանի մասնակիցների:
  2. Ընկերության մասնակցի կողմից իր բաժնեմասը (դրա մասը) երրորդ անձանց օտարել թույլատրվում է, եթե այլ բան նախատեսված չէ ընկերության կանոնադրությամբ:
  3. Ընկերության մասնակիցներն իրենց բաժնեմասերին համամասնորեն օգտվում են մասնակցի բաժնեմասը (դրա մասը) գնելու նախապատվության իրավունքից (բացառությամբ «Բանկերի, վարկային կազմակերպությունների, ներդրումային ընկերությունների և ապահովագրական ընկերությունների սնանկության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված դեպքի): Ընկերության մասնակիցը, որը ցանկանում է վաճառել իր բաժնեմասը (դրա մասը), պարտավոր է այդ մասին գրավոր տեղյակ պահել ընկերությանը՝ նշելով գինն ու վաճառքի մյուս պայմանները: Ընկերությունն այդ մասին գրությամբ՝ պատվիրված նամակով կամ անձամբ հանձնելով, հայտնում է ընկերության մյուս մասնակիցներին:
  - Այն դեպքում, երբ ընկերության մասնակիցները տեղեկացվելու օրվանից մեկ ամսվա ընթացքում կամ ընկերության կանոնադրությամբ կամ նրա մասնակիցների համաձայնությամբ նախատեսված այլ ժամկետում չեն օգտվում գնելու նախապատվության իրավունքից (բացառությամբ «Բանկերի և վարկային կազմակերպությունների սնանկության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված դեպքի), մասնակցի բաժնեմասը կարող է օտարվել երրորդ անձանց՝ նույն պայմաններով և ոչ պակաս այն գնից, որն առաջարկվել էր նրա մասնակիցներին:
  4. Ընկերության կանոնադրությամբ կարող է նախատեսվել ընկերության մասնակցի բաժնեմասի (դրա մասի) ձեռքբերման՝ սույն հոդվածի 3-րդ կետով նախատեսված՝ ընկերության նախապատվության իրավունքն այն դեպքում, երբ ընկերության մյուս մասնակիցները չեն օգտագործել բաժնեմասը (դրա մասը) գնելու իրենց նախապատվության իրավունքը:
  5. Սույն օրենքով նախատեսված՝ գնելու նախապատվության իրավունքի խախտմամբ բաժնեմասի վաճառքի դեպքում ընկերության ցանկացած մասնակից և (կամ) ընկերությունը, եթե ընկերության կանոնադրությամբ նախատեսված է ընկերության նախապատվության իրավունքը, իրավունք ունի 6 ամսվա ընթացքում դատական կարգով պահանջել անվավեր ճանաչելու այդ գործարքը, սկսած այն պահից, երբ նրանք իմացել են կամ պարտավոր էին իմանալ խախտման մասին:
  6. Սույն օրենքով նախատեսված բաժնեմասը գնելու նախապատվության իրավունքի զիջում չի թույլատրվում:
- (14-րդ հոդվածը լրաց. 27.04.04 ՀՕ-68-Ն, խմբ. 21.12.10 ՀՕ-218-Ն)*

#### **Հոդված 47. Շահագրգռվածությունն ընկերության գործարքը կնքելիս**

1. Գործարքները, որոնց կատարման մեջ առկա է ընկերության խորհրդի անդամի, ընկերության գործադիր մարմնի գործառույթները կատարող անձի շահագրգռվածությունը կամ ընկերության մասնակցի շահագրգռվածությունը, և որոնք ունեն ընկերության մասնակիցների ընդհանուր ձայների թվի քսան և ավելի տոկոսը, չեն կարող կատարվել առանց ընդհանուր ժողովի համաձայնության: Նշված անձինք ընկերության կողմից ճանաչվում են գործարք կնքելու մեջ շահագրգռված այն դեպքերում, եթե նրանք կամ նրանց ամուսինները, ծնողները, երեխաները, եղբայրները, քույրերը (այսուհետ՝ փոխկապակցված անձինք)՝
  - ա) հանդիսանում են գործարքի կողմ կամ ընկերության հետ իրենց հարաբերություններում հանդես են գալիս երրորդ անձանց շահերից.
  - բ) տիրապետում են (յուրաքանչյուրն առանձին-առանձին կամ համակցության մեջ) գործարքի կողմ հանդիսացող կամ ընկերության հետ հարաբերություններում երրորդ անձանց շահերից հանդես եկող իրավաբանական անձի բաժնեմասերի (փայի, բաժնետոմսի) քսան և ավելի տոկոսին.

զ) պաշտոններ են զբաղեցնում գործարքի կողմ հանդիսացող կամ ընկերության հետ հարաբերություններում երրորդ անձանց շահերից հանդես եկող իրավաբանական անձի կառավարման մարմիններում:

դ) ընկերության կանոնադրությամբ նախատեսված այլ դեպքերում:

2. Ընկերության կողմից գործարքի կատարման մասին որոշումը, որի կատարման մեջ առկա է շահագրգռվածությունը, ընդունվում է ընդհանուր ժողովի կողմից ընկերության գործարքի կատարման մեջ չշահագրգռված մասնակիցների ընդհանուր ձայների թվի մեծամասնությամբ:

3. Գործարքի կատարումը, որի կատարման դեպքում առկա է շահագրգռվածությունը, չի պահանջում սույն հոդվածի 2-րդ կետով նախատեսված ընդհանուր ժողովի որոշումն այն դեպքում, եթե գործարքը կատարվում է ընկերության և մյուս կողմի միջև առօրյա տնտեսական գործունեության շրջանակներում, որը տեղ է գտել մինչև այն պահը, որից սկսած գործարքը կատարելու մեջ շահագրգռված անձը ճանաչվում է այդպիսին՝ սույն հոդվածի 1-ին կետին համապատասխան (որոշումը չի պահանջվում մինչև հաջորդ ընդհանուր ժողովի անցկացման օրը):

4. Գործարքը, որի կատարման մեջ առկա է շահագրգռվածությունը, որը կատարվել է սույն հոդվածով նախատեսված պահանջների խախտմամբ, կարող է դատական կարգով ճանաչվել անվավեր՝ ընկերության կամ նրա մասնակցի հայցով:

5. Սույն հոդվածը չի կիրառվում մեկ մասնակցից բաղկացած ընկերությունների նկատմամբ, որն իրականացնում է տվյալ ընկերության գործադիր մարմնի գործառույթները:

#### **Հոդված 48. Խոշոր գործարքները**

1. Խոշոր է հանդիսանում այն գործարքը կամ մի քանի փոխկապակցված գործարքները, որոնք կապված են ընկերության կողմից ուղղակիորեն կամ անուղղակիորեն գույք ձեռք բերելու, օտարելու կամ օտարելու հնարավորության հետ, որի արժեքը կազմում է նման գործարքներ կատարելու մասին որոշման ընդունման օրվա դրությամբ ընկերության զուտ ակտիվների արժեքի 25 տոկոսից ավելին, եթե ընկերության կանոնադրությամբ նախատեսված չէ խոշոր գործարքի այլ չափ: Խոշոր չեն ճանաչվում այն գործարքները, որոնք կատարվում են ընկերության առօրյա տնտեսական գործունեության ընթացքում:

2. Խոշոր գործարք կատարելու մասին որոշումն ընդունվում է ընդհանուր ժողովի կողմից:

3. Ընկերության խորհրդի ստեղծման դեպքում ընկերության կողմից իր զուտ ակտիվների արժեքի 20-50 տոկոսը կազմող արժեքով ուղղակի կամ անուղղակի գույք ձեռք բերելու, օտարելու կամ օտարման հնարավորության հետ կապված խոշոր գործարքներ կատարելու մասին որոշման ընդունումն ընկերության կանոնադրությամբ կարող է վերապահվել ընկերության խորհրդի իրավասությանը:

4. Սույն հոդվածի պահանջների խախտմամբ կատարված խոշոր գործարքը կարող է ճանաչվել անվավեր դատարանի վճռով:

5. Ընկերության կանոնադրությամբ կարող է նախատեսվել, որ խոշոր գործարքներ կատարելու համար չի պահանջվում ընդհանուր ժողովի կամ ընկերության խորհրդի որոշումը:

6. Սույն հոդվածը չի կիրառվում մեկ մասնակցից բաղկացած ընկերությունների նկատմամբ, որն իրականացնում է տվյալ ընկերության գործադիր մարմնի գործառույթները:

*(48-րդ հոդվածը փոփ. 21.12.10 ՀՕ-218-Ն)*

**«Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենք**

**Գ Լ ՈՒ Խ VIII**

**ԽՈՇՈՐ ԳՈՐԾԱՐՔՆԵՐԸ**

**Հոդված 60. Ընկերության գույքի ձեռքբերման կամ օտարման հետ կապված խոշոր գործարքները**  
*(վերնագիրը փոփ. 26.05.21 ՀՕ-236-Ն)*

1. Խոշոր են համարվում՝

ա) մեկ կամ մի քանի փոխկապված գործարքները, որոնք, բացառությամբ Ընկերության բնականոն տնտեսական գործունեության շրջանակներում կատարվող գործարքների, ուղղակի կամ անուղղակի կապված են Ընկերության կողմից գույքի ձեռքբերման, օտարման կամ գույքի օտարման հնարավորության հետ, և որոնց արժեքը գործարքը կնքելու մասին որոշում ընդունելու պահի դրությամբ կազմում է Ընկերության ակտիվների հաշվեկշռային արժեքի 50 և ավելի տոկոսը.

բ) մեկ կամ մի քանի փոխկապված գործարքները, որոնց առարկա է հանդիսանում Ընկերության հասարակ (սովորական) կամ հասարակ (սովորական) բաժնետոմսերի փոխարկվող արտոնյալ բաժնետոմսերի (բացառությամբ ներդրումային ֆոնդերի բաժնետոմսերի) տեղաբաշխումը, որը կազմում է Ընկերության կողմից արդեն տեղաբաշխված հասարակ (սովորական) բաժնետոմսերի 50 և ավելի տոկոսը:

2. Խոշոր գործարքի առարկա հանդիսացող գույքի արժեքը որոշվում է սույն օրենքի 59-րդ հոդվածով սահմանված կարգով:

*(60-րդ հոդվածը լրաց. 22.12.10 ՀՕ-273-Ն, փոփ. 26.05.21 ՀՕ-236-Ն)*

*(26.05.21 ՀՕ-236-Ն օրենքն ունի անցումային դրույթ)*

**Հոդված 61. Ընկերության գույքի ձեռքբերման կամ օտարման հետ կապված խոշոր գործարքների կնքումը**

*(վերնագիրը խմբ. 26.05.21 ՀՕ-236-Ն)*

1. Խոշոր գործարք կնքելու մասին որոշումը ընդունում է ժողովը՝ դրան մասնակցող բաժնետերերի (քվեարկող բաժնետոմսերի սեփականատերերի) ձայների 3/4-ով, եթե Ընկերության կանոնադրությամբ ձայների առավել մեծ քանակ սահմանված չէ:

2. Սույն հոդվածով սահմանված պահանջները չպահպանելը խոշոր գործարք կնքելիս չի հանգեցնում գործարքի անվավերության, եթե Ընկերության հետ գործարք կնքած անձը գործել է բարեխիղճ՝ չգիտեր կամ չէր կարող իմանալ նշված պահանջներն Ընկերության կողմից չպահպանվելու մասին:

*(61-րդ հոդվածը լրաց. 22.12.10 ՀՕ-273-Ն, խմբ. 26.05.21 ՀՕ-236-Ն)*

*(26.05.21 ՀՕ-236-Ն օրենքն ունի անցումային դրույթ)*